

# ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

# لویس

LOUYS

*Armenian Monthly*

ISSN 1682-5446

Արշակ Զոպանյան 1872-1954



# 188, Հունիս 2014 թ.

No 188, June 2014

شماره ۱۸۸ تیر ماه ۱۳۹۳

# Այս համարում

## Հայերեն բաժին

1- Իրանահայ Համայնք.....	1
2- Հայաստան.....	2
3- Արցախ.....	8
4- Արեւմտյան Հայաստան.....	8
5- Միջազգային.....	11
6- Խոհեր.....	17

## Պարսկերեն բաժին

1- Լուրեր.....	1-3
2- Գծանկարչություն.....	3
3- Առածանի.....	3



**Շաբաթի առաջին էջում՝** Արշակ Չոպանյան

**Վերջին էջում՝** Լույս է տեսել Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 188, Հունիս 2014 թ.

No. 188, June 2014

ماهنامه لویس - شماره ۱۸۸ تیر ماه ۱۳۹۳

# ԼՈՒՅՍ

**Մշակութային եւ հասարակական ամսագիր**

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

**Էդ. Բաղդասարյան**

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys\_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

**LOUYS**

**Armenian Cultural and Social Monthly**

License-holder and Editor-in-Chief

**Ed. Baghdasarian**

www.Edic-Baghdasarian.com

**POBox 15875-9488 Tehran – Iran**

**E-mail : louys\_monthly@yahoo.com**

**Internet : www.louysonline.com**

**Թերթի Գինը՝** Հատվածաճառ - 5000 ռիալ  
**Բաժանորդագրություն՝**

**Իրան՝** մեկ տարի՝ 60,000 ռիալ

**Արտասահման՝** մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին: Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

# Արշակ Չոպանյան

Մահվան 60-ամյակի առիթով

Արշակ Հովհաննեսի Չոպանյանը ծնվել է 1872 թվականի հուլիսի 15-ին Կ. Պոլսում: Սովորել է Կ. Պոլսի Մբրուհյան դպրոցում, ապա՝ Կեդրոնական վարժարանում: Աշխատակցել է «Արևելք», «Մասիս», «Հայրենիք» պարբերականներին: 1895-ին սկսել է «Ծաղիկ» հանդեսի հրատարակությունը, լույս է ընծայել մի քանի համար և ահաբեկված համրդյան բռնություններից՝ նույն տարում փախչելով՝ հաստատվել է Փարիզում, ուր և անցկացրել է իր հետագա ամբողջ կյանքը: Մահացել է 1954 թվականի հունիսի 8-ին Փարիզում:

Չոպանյանը եղել է ռամկավար կուսակցության անդամ: Ստեղծագործել է գրական բոլոր սեռերով:

1898-1911 և 1929-1949 թթ. հրատարակել է հայտնի «Անահիտ» հանդեսը: Հասարակական, լրագրական-հրատարակչական աշխատանքներին զուգընթաց զբաղվել է արվեստի, բանասիրության, գրականագիտության և գրաքննադատության հարցերով, հրապարակախոսություններով, գրել է արձակ ու շափածո գեղարվեստական գործեր, կատարել է թարգմանություններ:

Առանձնակի նշանակություն ունի Չոպանյանի քննադատական և գիտական բանասիրական գործունեությունը: Նա նորովի է մեկնաբանել հայ գրականության շատ երևույթներ: Հրատարակել է «Նահապետ Քուչակի դիւանը» 1902-ին, «Նաղաշ Հովնաթանաշուղը և Հովնաթան Հովանթանեան նկարիչը» 1910-ին, «Հայ էջեր» 1912-ին, «Հայրեններու բուրաստանը» 1940-ին և այլ ուսումնասիրություններ: Կազմել և լույս է ընծայել Պ. Դուրյանի (1894) և Մ. Պեշիկթաշլյանի (1907) երկերը, որոնց նվիրել է նաև ուսումնասիրություններ: Առաջինն է Գրիգոր Նարեկացու ժառանգությունը վերլուծել որպես գեղարվեստական ստեղծագործություն և նրան դրել համաշխարհային գրականության հսկաների կողքին: Անդրադարձել է գրական նոր երևույթներին՝ հաճախ առաջինը տալով դրանց հեղինակների (Վ. Թեքեյան, Սիամանթո, Դ. Վարուժան, Ե. Չարենց, Մ. Զարիֆյան և ուրիշներ) ստեղծագործական ինքնատիպության բնութագիրը: Հոգվածներ է նվիրել նաև արևմտաեվրոպական և ռուս գրողներին:

Մեծ աշխատանք է կատարել հայ գրականությունը եվրոպայում ներկայացնելու և Հայ դատը պաշտպանելու ուղղությամբ: Թարգմանել ու ֆրանսերեն հրատարակել է հին և նոր շրջանի հայ բանաստեղծների գործերից, որոնք ամփոփվել են «Վարդենիք Հայաստանի» (հ. 1-3, 1918-29) ժողովածուում:

# Իրանահայ Համայնք

## Իրանի հայ համայնքի ներկայացուցիչները հանդիպել են Ֆրանսիայի խորհրդարանի անդամի հետ



**Յուլիսի 26, 2014**

Իրանի կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները, այդ թվում՝ հայ համայնքի անդամները, հունիսի 25-ին հանդիպել են Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավոր Օդիլ Սոգի հետ:

Հանդիպման ընթացքում հայազգի պատգամավոր Ռոբերտ Բեգլարյանը նշել է, որ կրոնական փոքրամասնությունները բոլոր քաղաքացիների հետ հավասար իրավունքներ ունեն, ինչպես նաև, Սահմանադրության համաձայն, նրանց թույլատրված է կրոնական ծիսակարգեր անցկացնել: IRNA գործակալության փոխանցմամբ, կրոնական փոքրամասնությունները նաև անվճար կրթության իրավունք ունեն:

Հանդիպմանը մասնակցել են Իրանի խորհրդարանի անդամներ, որոնք ներկայացնում են երկրի հյուսիսի եւ հարավի հայ համայնքները, ինչպես նաև ասորական եւ քաղդեական համայնքները ներկայացնող պատգամավորը:

Կողմերը խոսել են Իրանի եւ Ֆրանսիայի միջև հարաբերությունների, ինչպես նաև Մերձավոր Արևելքում ահաբեկչության աճի եւ դրա դեմ պայքարի անհրաժեշտության մասին:

*Լուրեր Չայաստանից - NEWS.am*

### Նշւեց «Ա. Ա. Ահարոնեան» մանկապարտեզի 20-ամեակը

25/06/2014

**Հինգշաբթի, յունիսի 19-ին, «Ա. Ա. Ահարոնեան» մանկապարտեզի սրահում, նշւեցին նոյն մանկապարտեզի 20-ամեայ եւ «Ձէյթուն» մանկապարտեզի 30-ամեայ յոբելեանները:**

«Ա. Ա. Ահարոնեան» մանկապարտեզը 1984 թւականին «Ձէյթուն» մանկապարտեզ անունով հիմնադրւել է Ձէյթուն քաղաքամասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու շրջափակում, ապա 1993 թւականին փոխադրւել է Լեւոն Ահարոնեանի բարերարութեամբ կառուցւած շէնքը:

Յոբելեանական ծրագիրն սկսւեց Տէրունական աղօթքով, ապա ցուցադրւեց մանկապարտեզի

հիմնօրհները եւ առօրեան պատկերող տեսաֆիլմ, որի ընթացքում բացատրութիւններ տրւեցին մանկապարտեզի պատմականի ու գործունէութեան մասին:



Այնուհետեւ հատւեց մանկապարտեզի 20-ամեակի տորթը, որից յետոյ ձեռնարկի 140624d01aԿազմակերպիչ յանձնախմբի անունից բացման խօսքով հանդէս եկաւ Անահիտ Ղազարեանը, որը շնորհաւորելով գոյգ յորելեանները՝ մաղթեց, որ «Ա. Ա. Ահարոնեան» մանկապարտեզը խրոխտ քայլերով շարունակի մանուկների դաստիարակութեան նւիրական աշխատանքը:

Ծրագրի գեղարուեստական բաժինը, որ վարում էր Հայրիկ Աղանեանը, իրականացաւ մանկապարտեզի շրջանաւարտների միջոցով: Ասմունքեց Մինէ Նազարեանը, պարային կատարում ունեցան Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան ժողովրդական պարարուեստի կենտրոնի սաները, մենապարեց նոյն պարախմբի անդամ Չեփիւռ Իփրանոսեանը, մեներգով ելոյթ ունեցան՝ Վահագն Սարգսեանը, Նարէ Ռոստոմեանը եւ Մերլի Ռոստոմեանը, ջութակի կատարումներով հանդէս եկան՝ Շարմաղ Տէր-Յովհաննիսեանը եւ Նանէ Յովհաննիսեանը, իսկ դաշնամուրի կատարումներով՝ Մէրինէ Սարգսեանը եւ Նարեկ Աբրահամեանը:

Գեղարուեստական կատարումներին մէջընդմէջ ծրագրի հաղորդավարի միջոցով «Ա. Ա. Ահարոնեան» մանկապարտեզի եւ ընդհանրապէս կրթա-դաստիարակչական հարցերի շուրջ հարցումներ ուղղւեցին հանդիսականների շարքերում ներկայ ազգային-հասարակական ու կրթական գործիչներին եւ «Ա. Ա. Ահարոնեան» մանկապարտեզի նախկին ու ներկայ ուսուցիչներին եւ ծնողական խորհուրդների անդամներին ու մանկապարտեզի տեսչուհի Անետ Բաղդասարեանին, որոնք նաեւ յուշեր պատմեցին մանկապարտեզում պաշտօնավարած օրերից:

Ծրագրի աւարտին յանձնւեցին յուշանւերներ եւ ընթերցւեց «Ա. Ա. Ահարոնեան» մանկապարտեզի բարերար Լեւոն Ահարոնեանի ուղերձը՝ յորելեանի առթիւ:

Վերջում Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանն իր շնորհաւորական խօսքն ասաց մանկապարտեզի 20-ամեայ յոբելեանի առթիւ՝ գնահատելով մանկապարտեզի անձնակազմին: Նա յորդորեց կրթա-դաստիարակչական աշխատանքները առաջ տանել մանկան հաւատքով եւ կոչ ուղղեց նւիրաւորութեամբ տեր կանգնել ու հոգ տանել ազգային կառոյցներին: Ձեռնարկի ընթացքում տեղի ունեցաւ ընդունելութիւն:

## Հայաստան

### Աշոտ Մանուչարյան. Հայ-ադրբեջանական սահմանին կրակոցները կապված են երեք հիմնարար գործընթացների հետ



Հունիսի 01, 2014

Սահմանին կրակոցները կապված են ոչ այնքան հայ-ադրբեջանական հարաբերությունների, որքան Մեծ Մերձավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձությունների հետ, ինչպես, օրինակ, արդեն գոյություն ունեցող իսլամական ուժերի պետությունն ու քառսի տարածումն են: Այս մասին հունիսի 1-ին կայացած մամուլի ասուլիսում հայտարարեց «Վարաբադ» կոմիտեի նախկին անդամ Աշոտ Մանուչարյանը:

Նրա խոսքով, Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահներ Իլիամ Ալիևն ու Արթ Սարգսյանը չեն կարող ինքնուրույն որոշում կայացնել: Հայաստանի եւ Ադրբեջանի միջև ռազմական գործողությունների վերակաման հավանականությունը նա շատ փոքր է համարում: «Երեք հիմնարար գործընթաց է տեղի ունենում, որոնք արտացոլվում են մեր սահմանային իրավիճակի վրա եւ որոնց պատճառով էլ կրակոցներ են հնչում. 1. Եվրոպայի համար պայքար, 2. Մերձավոր Արևելքի տարածաշրջանում եւ ավելի լայն տարածքում քառսի տարածում, 3. Ռուսաստանի ճակատագիր: Ես չնշեցի Ուկրաինան, քանի որ Ուկրաինան ընդամենը գործիք է», - նշեց Աշոտ Մանուչարյանը:

Ներկայում իշխող աշխարհակարգը, նրա կարծիքով, խնդիրների առջև է կանգնած: «Այդ աշխարհակարգին քառս է հարկավոր աշխարհում: Հարկավոր է, որ Եվրոպան շարունակի ենթարկվել ատլանտյան քաղաքակրթությանը, իսկ Եվրոպան փորձում է դուրս գալ ազդեցության ոլորտից, եւ Եվրոպայի այդ փորձը կանխվում է Ուկրաինայի միջոցով: Իսկ Ռուսաստանը, իր կամքից անկախ, դիմադրում է դրան, քանի որ այն դերը, որ ձգտում է կատարել Ռուսաստանը, նրան բերել է այնտեղ, որտեղ բախվում են ատլանտիզմի ուժերը», - ընդգծեց Մանուչարյանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

### Որոշումն ընդունվեց. Հայաստանում էլեկտրաէներգիան օգոստոսի 1-ից կթանկանա 10 տոկոսով

Հունիսի 01, 2014

Հայաստանում բնակիչների համար էլեկտրաէներգիան այս տարվա օգոստոսի 1-ից կթանկանա 9,9 տոկոսով: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նիստում այսօր՝ հունիսի 1-ին, միաձայն որոշում կայացվեց օգոստոսի 1-ից էլեկտրաէներգիայի սակագինը թանկացնել 3,85 դրամով:

Ցերեկային սակագինը բնակիչների համար 38 դրամից կդառնա 41,85 դրամ՝ մեկ կվ/ժամ-ի դիմաց, գիշերային սակագինը 28 դրամից կդառնա 31,85 դրամ: Գիշերային սակագները գործում են ժամը 22.00-ից մինչև առավոտյան ժամը 06.00-ը (մարտի վերջին կիրակիից մինչև հոկտեմբերի վերջին կիրակին), եւ ժամը 23.00-ից մինչև ժամը 07.00-ն, հոկտեմբերի վերջին կիրակիից մինչև մարտի վերջին կիրակին:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

### Արամ Մանուկյան. Հայաստանում էլեկտրաէներգիայի թանկանալը կհանգեցնի արտագաղթի նոր ալիքի



Հունիսի 01, 2014

Հայաստանում էլեկտրաէներգիայի թանկանալը կհանգեցնի արտագաղթի նոր ալիքի: Այս մասին, այսօր՝ հունիսի 1-ին, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նիստում հայտարարել է ՀԱԿ խմբակցության քարտուղար Արամ Մանուկյանը:

«Եթե Հայաստանի էլեկտրահամակարգերին պետք են նոր ֆինանսներ, փորձեք այնպես անել, որ դ չվճարեն հասարակ մարդիկ: Հակառակ դեպքում թանկացումը շղթայական ռեակցիա առաջ կբերի՝ կթանկանա կյանքը եւ արտագաղթի նոր ալիք կսկսվի: Խնդրում եմ ձեզ գոնե հետաձգեք թանկացման մասին հարցի քննարկումը», - հայտարարել է նա:

Ի պատասխան Հանձնաժողովի նախագահ Ռոբերտ Նազարյանը խնդրել է սակագնային վարչության պետ Գարեգին Բաղրամյանին հիշեցնել, թե ներկա սակագինը մեկ ամիս պահպանելը որքան է արժենում էներգահամակարգի վրա: «1,5 մլրդ դրամ», - պատասխանել է Բաղրամյանը:

Արամ Մանուկյան էլ արձագանքել է. «Փողերը վերցրեք ԼՖիկ Սամոյից, նա կունենա»:

Հիշեցնենք, որ այս տարվա օգոստոսի 1-ից Հայաստանում էլեկտրաէներգիայի սակագինը թանկացավ 3,85 դրամով:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

### Ճավարչ Քոչարյան. Եվրասիական հանձնաժողովը կողմերին է ուղարկել պատրաստված պայմանագիրը՝ ներպետական համաձայնեցման համար

Հունիսի 01, 2014

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը նախօրեին Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության մասին պայմանագիրն ուղարկել է ներպետական համաձայնեցման: Այս մասին, այսօր՝ հունիսի 1-ին, «Ազգային եւ տարածաշրջանային խաղաղարարական ներուժերի ինտեգրումը խաղաղ օպերացիաների համընդհանուր համակարգում» թեմայով միջազգային

ռազմավարական քաղաքական ֆորումի ժամանակ, լրագրողների հետ զրույցում նշել է Հայաստանի ԱԳ փոխնախարար Շավարշ Քոչարյանը, հաղորդում է «Արմենպրես»-ը:



«Ոչ որ չի ասել, որ հուլիսի 1-ին Հայաստանը կատրագրի Եվրասիական տնտեսական միությանը միանալու համաձայնագիրը: Որոշումը, որ կայացրել է ԵՏՄ բարձրագույն մարմինը, վերաբերում էր մինչև հուլիսի 1-ը պայմանագրի նախապատրաստված ստորագրման համար: Երեկ Եվրասիական համաձայնագրով կողմերին է ուղարկել արդեն նախապատրաստած պայմանագիրը ներպետական համաձայնեցման համար: Այդ տեսակետից տեղի է ունենում այն, ինչ նախատեսված էր»,- ասել է Շավարշ Քոչարյանն ու հավելել. «Հույս ունենք, որ ներպետական համաձայնեցումը շատ երկար չի տևի: Երբ դա ավարտվեց, կարելի է խոսել ժամկետների մասին»:

Ինչ վերաբերում է նրան, որ Բելառուսը եւ Ղազախստանը դեմ են Հայաստանի անդամակցությանը, Հայաստանի ԱԳ փոխնախարարն ընդգծել է. «Եթե այդպես լիներ, ապա երեկ համաձայնագիրը չէր ուղարկվի, որովհետև եթե որեւէ մեկը դեմ է, ապա ինքը կարող է որեւէ հարցի շուրջ ստեղծել անհաղթահարելի խոչընդոտ: Իսկ հարցերը հարյուրավոր են: Այնպես որ, նման բան չկա»:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

**Սեյրան Օհանյան. Մենք ի վիճակի ենք առանց արտաքին միջամտության Ադրբեջանի հետ սահմանին պահպանել հավասարակշռությունը**



**Հուլիսի 01, 2014**

ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը չի կարծում, որ Ադրբեջանի հետ սահմանին իրավիճակն այնքան է սրվել, որ անհրաժեշտ է դիմել ՀԱՊԿ-ին: Այս մասին նախարարն ասաց հուլիսի 1-ին լրագրողների հետ զրույցում:

Սեյրան Օհանյանը հիշեցրեց, որ գոյություն ունի ՀԱՊԿ-ին դիմելու որոշակի մեխանիզմ: Առաջին հերթին գնահատվում է իրավիճակը, որովհետև է մարտական գործողությունների վերակաման հավանականության աստիճանը: «Զեմ կարծում, որ հիմա իրավիճակն այնպիսին է, որ ՀԱՊԿ-ին դիմելու անհրաժեշտություն է առաջացել»:

Հայոց բանակն օրեցօր ավելի մարտունակ է դառնում եւ ունակ է ինքնուրույն լուծել առաջադրված խնդիրները»,- ընդգծեց նախարարը՝ հիշեցնելով, որ դարաբաղյան հակամարտությունն աշխարհում միակն է, որտեղ հրադադարի ռեժիմը պահպանվում է առանց արտաքին միջամտության: «Երբ խոսում ենք հավասարակշռության մասին, խոսքը ոչ թե քանակի, այլ որակի եւ մեր զինվորների մարտական ոգու մասին է»,- ասաց Սեյրանը Օհանյանը:

«Այլ հարց է, որ ՀԱՊԿ-ն պետք է տեղեկացված լինի խախտումների մասին եւ հանդես գա համապատասխան հայտարարությամբ, ընդգծի, թե ով է խախտման նախաձեռնողը: Ամփոփապես ասեմ, որ հայկական կողմը երբեք հանդես չի գալիս խախտման նախաձեռնողի դերում, մենք միայն պատասխանում ենք ոտնձգություններին»,- ընդգծեց Սեյրան Օհանյանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

**Հայաստանից Ռուսաստանի Դաշնություն և Շվեդարիա է արտահանվել 49.0 տոննա ծիրան**



19 Հունիսի 2014

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն. թայում պտղի արտահանման ծավալներ

Հունիսի 19-ի դրությամբ Հայաստանից Ռուսաստանի Դաշնություն և Շվեդարիա է արտահանվել 49.0 տոննա ծիրան:

329.49 տոննա կեռաս է արտահանվել Ռուսաստանի Դաշնություն և Վրաստանի Հանրապետություն:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժին  
HayNews.am

**Նավարաի խորհրդարանը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը**



Հունիսի 24, 2014

Իսպանական Նավարա ինքնավար մարզի խորհրդարանը հունիսի 23-ին Հայոց ցեղասպանության ճանաչման հռչակագիր է ընդունել, որում ասվում է, որ «ղեպքերը, որոնցից տուժել է հայ ժողովուրդը, իսկական ցեղասպանություն են եղել»:

«Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցի մոտենալուն զուգահեռ՝ նման հայտարարությունները պարզ ցույց են տալիս եվրոպացիների կարեկցանքը հայ ժողովրդի եւ նրա տառապանքների նկատմամբ: «Հայաստանի եվրոպացի ընկերներ» կազմակերպությունը հպարտ է, որ իր ընդարձակ ցանցի շնորհիվ, Եվրոպայում ավելի շատ շահագրգիռ կողմեր են գիտակցում այս հարցի կարևորությունը»,- հայտարարել է կազմակերպության տնօրեն Էդուարդո Լորենցո Օչոան:

Հռչակագիրը դատապարտում է այն ժամանակվա թրքական ռեժիմի քաղաքականությունը, եւ Թուրքիային կոչ անում «դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ եւ կարգավորել սահմանային վեճը խաղաղ ճանապարհով»: Բացի դրանից, հռչակագրում ընդգծվում է, որ հաշվի առնելով Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցելու թեկնածուի կարգավիճակը, պետք է հրատապ լուծել այս երկու հարցերը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

**ԱՄՆ Սենատի Հատկացումների  
Հանձնաժողովները հաստատել են  
Հայաստանին Եւ Արցախին տրամադրվող  
օգնությունը**



Հունիսի 25, 2014

Ներկայացուցիչների պալատի հատկացումների հանձնաժողովն ընդունեց 2015 ֆինանսական տարվա պետական, արտաքին գործառնությունների եւ այլ հարակից ծրագրերի (SFOPS) հատկացումների օրինագիծը, որն իր մեջ ներառում է Միացյալ Նահանգների տնտեսական, մարդասիրական եւ ռազմական օգնությունը Հարավային Կովկասին,- հաղորդում է Ամերիկայի Հայկական Համագումարը (Համագումար): Հայաստանին, Ադրբեջանին, Վրաստանին եւ Լեռնային Ղարաբաղին հատկացվող ֆինանսավորման չափերը չէին նախանշվել օրինագծում:

Ներկայացուցիչների պալատի օրինագիծը նման էր Սենատի տարբերակին, որն հաստատվել էր անցած շաբաթ: Երկու օրինագծերն էլ պահպանել են Ազատության ակտի 907-րդ ուղղումը՝ վերահաստատելով հումանիտար եւ այլ աջակցությունների վեց ավանդական բացառությունները Ադրբեջանին: 907-րդ ուղղումը հաստատվել է 1992թ. եւ պահանջում է Ադրբեջանի կառավարությունից «զգալի քայլեր ձեռնարկել Հայաստանի եւ Արցախի նկատմամբ բոլոր շրջափակումների վերացման եւ ուժի այլ կիրառումների դադարեցման ուղղությամբ»:

Այնուամենայնիվ, Սենատի զեկույցը, ի տարբերություն Ներկայացուցիչների պալատի, հատկապես կարեւորեց Լեռնային Ղարաբաղին տրամադրվող ֆինանսավորումը: Սենատի զեկույցում ասվում է. «Հանձնաժողովը առաջարկում է նախորդ տարիների գումարի չափով օգնություն տրամադրել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունից տուժածներին, ինչպես նաեւ

հակամարտությանն առնչվող ընթացիկ կարիքների համար»:

«Լեռնային Ղարաբաղի բնակչությանը շարունակական օգնության տրամադրումը կարեւորագույն առաջնահերթություններից է», - Համագումարին հայտնեց սենատոր Մարկ Քիրքը, ով Սենատի Հատկացումների հանձնաժողովի անդամ է: Մեկնաբանելով Ներկայացուցիչների պալատի օրինագիծը՝ Հատկացումների հանձնաժողովի անդամ Ադամ Շիֆը Համագումարին հայտնեց. «Ես հիասթափված եմ, քանի որ մենք չկարողացանք համաձայնության հասնել ընդգծելով Լեռնային Ղարաբաղի հումանիտար օգնության կարիքը: Մենք պետք է շարունակենք պայքարել այս աջակցության համար, քանի որ սույն օրինագիծը ընթանում է օրենսդրական գործընթացով՝ ապահովելով լավագույն հնարավոր արդյունքը մեր դաշնակիցներ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի համար: Հաշվի առնելով Ադրբեջանի ռազմատենչ հռետորաբանությունը եւ շարունակական հարձակումները, այս օգնությունը բացարձակ անհրաժեշտ է տարածաշրջանում ազատության, բարգավաճման եւ ինքնորոշման համար»:

Ներկայացուցիչների պալատի եւ Սենատի 2015 ֆինանսական տարվա հատկացումների օրինագծերից յուրաքանչյուրը կազմել է մոտավորապես 48 մլրդ ԱՄՆ դոլար, որը մոտ 700 մլն-ով պակաս է 2014 ֆինանսական տարվա սահմանված մակարդակից, եւ 280 մլն-ով պակաս՝ 2015 ֆինանսական տարվա համար Նախագահի պահանջվածից:

Վարչակազմի բյուջեն նախատեսում է անում տրամադրել 1.7 միլիոն ԱՄՆ դոլար Արտաքին ռազմական ֆինանսավորման (FMF) եւ 600.000 ԱՄՆ դոլար՝ Միջազգային ռազմական կրթության եւ վերապատրաստման (IMET) համար: Այս գումարը 1 մլն ԱՄՆ դոլարով պակաս է անցած տարվա բյուջեի պահանջից Արտաքին ռազմական ֆինանսավորման համար, սակայն Միջազգային ռազմական կրթության եւ վերապատրաստման համար ֆինանսավորումը կայուն է անցած տարիների հետ համեմատ եւ պահպանված է ռազմական փոխադարձությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ:

Ի հավելում Արտաքին ռազմական ֆինանսավորման եւ Միջազգային ռազմական կրթության եւ վերապատրաստման օգնության, Վարչակազմի 2015 ֆինանսական տարվա բյուջեն նաեւ առաջարկել է, որ Հայաստանը ստանա 20.7 մլն ԱՄՆ դոլար Տնտեսական աջակցության ֆոնդերի համար (համեմատած 24.7 մլն ԱՄՆ դոլարի 2014 ֆինանսական տարվա պահանջի) եւ 1.7 մլն ԱՄՆ դոլար Թմրանյութերի միջազգային շրջանառության վերահսկման եւ օրենքի գերակայության ապահովման համար (համեմատած 2.8 մլն ԱՄՆ դոլարի 2014 ֆինանսական տարվա պահանջի): Վարչակազմը նաեւ զրոյացրել է առողջապահության ոլորտում տրվող օգնությունը: Ընդհանուր առմամբ, 2015 ֆինանսական տարվա բյուջեն տրամադրում է Միացյալ Նահանգների կողմից 24.7 մլն ԱՄՆ դոլար օգնություն Հայաստանին, որը 6.143 մլն ԱՄՆ դոլարով պակաս է Վարչակազմի 2014 ֆինանսական տարվա բյուջեի՝ 30.843 մլն ԱՄՆ դոլարի համեմատ:


Այս տարվա սկզբին Համագումարը Ներկայացուցիչների Պալատի Հատկացումների հանձնաժողովին ներկայացրած իր հայտարարության մեջ կարեւորեց Միացյալ Նահանգների կողմից Արցախին, ինչպես նաեւ Հայաստանին ցուցաբերվող օգնությունը, եւ խիստ անհրաժեշտ մարդասիրական օգնությունը Սիրիայում բնակվող հայերին

եւ նրանց, ովքեր արտագաղթում են Միրիայից: Բացի այդ, Համագումարը մատնանշեց նաեւ, որ անհասկանալի էր ներման շնորհումը ադրբեջանցի սպային, ով դաժանորեն սպանել էր հայ սպային ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» գորավարժությունների ժամանակ, եւ կոչ արեց, որ ենթահանձնաժողովը դադարեցնի ռազմական օգնություն հատկացնել Ադրբեջանին:

«Հաշվի առնելով Թուրքիայի եւ Ադրբեջանի՝ Հայաստանի շարունակական շրջափակումը եւ Ադրբեջանից աճող անվտանգության սպառնալիքները գուգորդված ադրբեջանցի մարդասպանին անբացատրելի ներման շնորհումով, ինչպես նաեւ մյուս տարածաշրջանային զարգացումները, Համագումարը կոչ է անում Կոնգրեսին ապահովել կայուն օգնություն Հայաստանին եւ Արցախին», - հայտարարել է Համագումարի գործադիր տնօրեն Բրայան Արդունին՝ հավելելով. «Ավելին, Միրիայում եւ Իրաքում վերջին զարգացումների հետ կապված՝ Համագումարը կոչ է անում Կոնգրեսին անհապաղ քայլեր ձեռնարկել՝ տեղի քրիստոնյա հայ համայնքին հրատապ հումանիտար օգնություն տրամադրելու նպատակով»:

Այն բանից հետո, երբ նախագծերը կանցնեն համապատասխան բաժինների քննությունը, օրենսդրական գործընթացում հաջորդ քայլը կլինի Հատկացումների քննարկման հանձնաժողովի ստեղծումը: Հանձնաժողովի անդամները նախքան օրինագծի՝ Նախագահի վավերացմանն ուղարկելը, կներդաշնակեցնեն Ներկայացուցիչների Պալատի եւ Սենատի ներկայացրած տարբերակներում առկա տարբերությունները:

**Մայր Աթոռը ողջունում է ԱՄՆ Կոնգրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի բանաձեւը**



Հունիսի 27, 2014

Հայ առաքելական սուրբ եկեղեցին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն ողջունում են ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի կողմից հունիսի 26-ին ընդունված H. R. 4347 բանաձեւը, որով պահանջում է ԱՄՆ Պետքարտուղարությանը ամենամյա հաշվետվություն ներկայացնել՝ Թուրքիայում բռնազավթված քրիստոնեական սրբավայրերի եւ կալվածքների պահպանության, վերականգնման եւ իրավատերերին վերադարձման ուղղությամբ ԱՄՆ կողմից գործադրվող ջանքերի վերաբերյալ:

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը բարձր է գնահատում հանձնաժողովի անդամների ջանքերը՝ հանուն արդարության վերականգնման եւ խաղաղության ու համերաշխության հաստատման: Որդեգրված բանաձեւը կարևոր քայլ է ի պաշտպանություն Թուրքիայում քրիստոնեական փոքրամասնությունների եւ նրանց

իրավունքների», -ասված է Մայր աթոռի տարածած հաղորդագրության մեջ:

**Թուրքագետ. Պանթուրքիզմի գաղափարի տարածումից հարկավոր է լուրջ սպառնալիք ակնկալել դարաբաղյան հարցում**



Հունիս 30, 2014

Կարծիքը, թե պարթուրքիզմի գաղափարն արդեն անցյալում է, սխալ է, եւ հարկավոր է զգալի սպառնալիք ակնկալել, առաջին հերթին, դարաբաղյան հարցում: Այս մասին հունիսի 30-ի մամուլի ասուլիսում հայտարարեց թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը:

Նրա խոսքով, թյուրքալեզու պետությունների հարաբերությունների ջերմացումը Հայաստանի համար անհանգստացնող գործոն է: «Եվ դարաբաղյան հարցն ընդլայնում է իր սահմանները: Թյուրքալեզու պետությունների ներկայացուցիչների տարբեր հանդիպումների ժամանակ այդ հարցը նույնպես դառնում է օրակարգային թեմա», - նշեց Մելքոնյանը:

Թուրքագետը համոզված է, որ մեծ քաղաքական դաշտում պանթուրքիզմի առաջին թշնամիներն են Ռուսաստանը, Չինաստանն ու Իրանը: «Սակայն մեզ համար պանթուրքիզմն ավելի զգալի է արտահայտվում, քանի որ նախ՝ Հայաստանը, ի տարբերություն Ռուսաստանի կամ Իրանի, ավելի թույլ երկիր է՝ դրան հակազդելու համար, եւ երկրորդ՝ գաղափարական տեսանկյունից պանթուրքիզմը նաեւ հակահայկական բնույթ ունի», - ընդգծեց Մելքոնյանը:

Լուրերը Հայաստանից - NEWS.am

**Աշխատանքային խմբի ղեկավար. Հայաստանում դարաբաղյան հակամարտության հետեւանքով անհետ կորածների թիվը կազմում է ավելի քան 200**



Հունիսի 29, 2014

Այս պահին Հայաստանում դարաբաղյան հակամարտության հետեւանքով անհետ կորած է համարվում ավելի քան 200 մարդ: Այդ մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում հայտնել է Հայաստանի գերիների, պատանդների եւ անհետ կորածների հարցերով

հանձաժողովի աշխատանքային խմբի ղեկավար Արմեն Կապրիելյանը:

Նա հիշեցրել է, որ տարբեր ժամանակներում նրանց մի մասի գտնվելու վայրի մասին տվյալներ են հայտնվել: Տեղեկությունների ճշտումից հետո ցուցակ է ստացվել, որում այս պահին 94 ազգանուն կա: Ընդհանուր առմամբ Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում անհետ կորած է համարվում մոտ 1000 քաղաքացի:

Միաժամանակ Աշխատանքային խմբի ղեկավարը նշել է, որ աղբյուրներից հայտնաբերվում է օգնել անհետ կորածների որոնման աշխատանքներում՝ անտեսելով հայակական կողմի բոլոր ջանքերն այդ ուղղությամբ:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

### Այս տարվա ընթացքում Հայաստանի բանակում 23 զինծառայող է մահացել. ՀՔԱ Վանաձորի գրասենյակ



#### Հուլիս 01, 2014

2014 թվականի առաջին կիսամյակում ՀՀ զինված ուժերում մահացել է 23 զինծառայող 22 միջադեպի հետևանքով: Այս մասին նշված է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացրած ուսումնասիրության արդյունքում հրապարակած զեկույցում:

Ըստ այդմ, նշված ժամանակահատվածում գրանցված մահացության 23 դեպքերից 11-ը հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով է, 2-ը զենքի հետ վարվելու կանոնների խախտման 3-ը՝ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման, 4-ը՝ դժբախտ պատահարի, 3-ը՝ առողջական խնդիրների եւ ոչ պատշաճ բժշկական ծառայության տրամադրման պատճառով:

Հարկ է նշել, որ 2013 թ-ի ամբողջ ընթացքում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացել է 5 զինծառայող, իսկ 2014 թ-ի միայն առաջին կիսամյակում արդեն գոհվել է կրկնակի թվով զինծառայող՝ 11 հոգի, որից 3-ը՝ հակառակորդի դիվերսիոն խմբի ներթափանցման հետևանքով, մյուսները, ըստ լրատվամիջոցների տրամադրած տեղեկատվության, դիպուկահարների կողմից: Բացի այդ, նշված ժամանակահատվածում մահացության դեպքերը 2013 թ-ին կազմում էր 15 հոգի, իսկ այս տարի նույն ժամանակահատվածում մահացության դեպքերը ավելի քան 30 տոկոսով ավելացել են:

Հրադադարի խախտման հաճախականությունը 2014 թ-ին 2013 թ-ի համեմատ աճել է նույն ժամանակահատվածի համար, սակայն եթե դիտարկենք հրադադարի ռեժիմի խախտումների թիվ/գոհերի թիվ հարաբերակցության դինամիկան, ապա տեսնում ենք, որ մահացության մեկ ելքին հանգեցնող հրադադարի ռեժիմի խախտումների թիվն աճում է: 2014 թ-ի հունվար-հունիս ամիսների ընթացքում տեղի ունեցած 23 մահվան փաստերից 16-ի մասին է

տարածվել պաշտոնական հաղորդագրություն: Մահացության դեպքերից 8-ը տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության, 15-ը՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում: Չոհերից 5-ը պայմանագրային զինծառայողներ են, որոնցից 1-ը ՀՀ-ում ՌԴ զորամասի զինծառայող: Մահացության դեպքերից 4-ը սպայական կազմից է. 2 ավագ-լեյտենանտ, 1 գեղապետ եւ 1 փոխգնդապետ: Մյուս 14 զինծառայողներն, ըստ հասանելի տեղեկատվության, ժամկետային զինծառայողներ են: 23 դեպքերից 18-ի առնչությամբ հարուցվել է քրեական գործ, որից 8-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի՝ սպանություն՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը, 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ծառայության նկատմամբ պետի կամ պաշտոնատար անձի անփութ վերաբերմունքը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով՝ ծառայության նկատմամբ պետի կամ պաշտոնատար անձի անփութ վերաբերմունքը, որը պատճառել է էական վնաս, 2 դեպքի առիթով քրեական գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, որն առաջացրել է ծանր հետևանքներ, 1 քրեական գործ հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 365 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ ՀՀ անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ ճանապարհային երթուղիների եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 373 հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ զենքի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ: Մյուս դեպքերում չի նշվում, թե արդյոք հարուցվել են քրեական գործեր եւ ինչ հոդվածներով: Ըստ ամփա տեղեկատվության հարուցված 18 քրեական գործերը գտնվում են նախաքննության փուլում:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

### Նախկին վարչապետ Սարգսյանը նշանակվել է ԱՄՆ-ում դեսպան



Հայաստանի նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանը նշանակվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում Հայաստանի դեսպան: Համապատասխան հրամանագիրը ստորագրել է նախագահ Սերժ Սարգսյանը հունիսի 26-ին, հաղորդել է ՀՀ նախագահի մամուլի ծառայությունը: Այրիլի սկզբին վարչապետ Սարգսյանը հրաժարական տվեց



պաշտոնից՝ վեց տարի վարչապետ աշխատելուց հետո: Մինչ այդ նա 10 տարի եղել էր Կենտրոնական բանկի նախագահը: Այս շարքից ավելի վաղ ստորագրված մեկ այլ հրամանագրով Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը օլիմպիական չեմպիոն և Տիգրան Սարգսյանի կառավարության սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Յուրի Վարդանյանին նշանակել է Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան:

**ԱՄՆ-ում ստորագրահավաք է սկսվել՝ Տիգրան Սարգսյանի դեսպան նշանակվելու դեմ**

**Հուլիսի 01, 2014**

ԱՄՆ Հայկական ֆորումը ստորագրահավաք է սկսել՝ ԱՄՆ ՀՀ դեսպան նշանակված Տիգրան Սարգսյանի դեմ: Ֆորումի հայտարարության մեջ մասնավորապես ասվում է. «Մենք գրում ենք ԱՄՆ-ին՝ տեղեկացնելու, որ նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանը ներգրավված է միլիոնավոր դոլարների դրամաշրջության մեջ՝ ներառյալ Կիպրոսի Հանրապետությունում եղած սկանդալները: Օգտագործելով իր իշխանությունը Հայաստանում անձնական ֆինանսական շահույթ ունենալու նպատակով խաբեությամբ եւ դավադրությամբ ազատվել, խուսափել է օրենքով սահմանված պատժից: Հայաստանի կառավարության շրջանակներում փորձեր են արվել օգնել Սարգսյանին խուսափելու արդարադատությունից ու պաշտոն ստանալու ԱՄՆ-ում: Մենք պահանջում ենք, որ ԱՄՆ-ն կանխի Տիգրան Սարգսյանի՝ արդարությունից փախչելու փորձը: Մենք պահանջում ենք, որ ԱՄՆ-ն հաշվի առնի Տիգրան Սարգսյանի հանցանքներին մեղսակից լինելը: Մենք պահանջում ենք, որ ԱՄՆ-ի կառավարությունը մերժի Տիգրան Սարգսյանին՝ պաշտոն ստանձնելու հարցում»: Նշենք, որ ստորագրահավաքին մասնակցել են արդեն հարյուրավոր քաղաքացիներ: Հիշեցնենք, որ Տիգրան Սարգսյանը վարչապետի պաշտոնից հրաժարվել է ապրիլի 3-ին, հունիսի 26-ին նշանակվել է ԱՄՆ ՀՀ դեսպան:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

**Հայաստանի և Արցախի խորհրդարանները ԵԱՀԿ Մինսկի խմբին կոչ են անում ապահովել Արցախի մասնակցությունը բանակցություններին**



**Հունիսի 26, 2014**

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի միջխորհրդարանական համաձայնագրովը դիմել է Մինսկի խմբի համանախագահներին ձեռնարկելու անհրաժեշտ

քայլեր՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լիարժեք մասնակցության ապահովմանը բանակցային գործընթացի բոլոր փուլերին:

«Հանձնաժողովը, Ընդգծելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման եւ կազմավորման գործընթացի լիովին եւ անթերի համապատասխանությունը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներին ու նորմերին եւ այն ժամանակ դեռեւս գործող ԽՍՀՄ օրենսդրությանը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության՝ որպես Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման երաշխավոր լինելու իրողությունը:

Արձանագրելով, որ՝ ի պատասխան Արցախի ժողովրդի ազատ կամաարտահայտության, Ադրբեջանը որդեգրեց էթնիկ գտումների եւ ուժային մեթոդներով հարցի լուծման քաղաքականություն, որը շարունակվում է ցայսօր, Համոզված լինելով, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչումը կապահովի ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի անշրջելիությունը եւ Ադրբեջանի համար կհանդիսանա ուժի եւ ուժի սպառնալիքի կիրառման անթույլատրելիության ազդանշան, Հաշվի առնելով, որ 1994 թ. մայիսի 12-ին ուժի մեջ մտած Լեռնային Ղարաբաղի, Ադրբեջանի եւ Հայաստանի կողմից ստորագրված հրադադարի մասին համաձայնությունը ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում խիստ կարևոր ձեռքբերում է, որը հնարավոր դարձավ Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի իշխանությունների միջեւ ուղղակի բանակցությունների շնորհիվ, Վերահաստատելով հավատարմությունը ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության բացառապես խաղաղ կարգավորմանը՝

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ հակամարտության վերջնական կարգավորման գրավական հանդիսացող հրադադարի ռեժիմի ամրապնդման անհրաժեշտության եւ խաղաղ գործընթացի անշրջելիության ապահովման կարևորության մասին:

ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրներին գործնական քայլեր ձեռնարկել Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության սահմանագծից դիպուկահարների հետ քաշման, միջադեպերի հետաքննության, եւ ժողովուրդների միջեւ ասելություն սերմանող հայտարարությունների ու գործողությունների բացառման ուղղությամբ,

ՀԱՄՈՉՄՈՒՆՔ Է հայտնում, որ հայ ժողովուրդը՝ Հայաստանում, Արցախում եւ ի սկիզբում աշխարհի, ինչպես եւ նախկինում, կգործադրի իր ողջ ներուժը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի՝ ՄԱԿ-ի կանոնադրությամբ եւ միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերով երաշխավորված ինքնորոշման իրավունքն ու անվտանգությունն ապահովելու համար:

ԴԻՄՈՒՄ Է Մինսկի խմբի համանախագահներին ձեռնարկելու անհրաժեշտ քայլեր՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լիարժեք մասնակցության ապահովմանը բանակցային գործընթացի բոլոր փուլերին»,- ասվում է հայտարարության մեջ:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

# Արցախ

## Իսպանիայի Սենատի անդամն Արցախում է



**Հունիսի 28, 2014**

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը հունիսի 28-ին ընդունել է Իսպանիայի Սենատի անդամ Ուրկո Այարցային:

Հանդիպմանն արձարձվել են Արցախի եւ Եվրոպայի փոխգործակցությանը, ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության կարգավորմանը եւ ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացմանն առնչվող մի շարք հարցեր:

Հատուկ ուշադրություն է դարձվել Բասկերի Երկրի եւ Արցախի միջև կայուն կապերի հաստատման խնդիրներին: Հանդիպմանը մասնակցում էին ԼՂՀ արտգործնախարար Կարեն Միրզոյանը, Հայաստանի եվրոպացի բարեկամներ կազմակերպության տնօրեն Էդուարդո Լորենցո Օչան, պաշտոնատար այլ անձինք:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## ԼՂ խնդիրը պետք է լուծվի բացառապես Մինսկի խմբի կողմից առաջարկված 3 սկզբունքի հիման վրա. Ջոն Յեֆերն



18 Հունիսի 2014 - 16:04

Հայաստանում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Յեֆերնը այսօր [Tert.am-ի](#) հետ զրույցում անդրադառնալով երեկ «Հանրային» հեռուստաընկերության «Հարցազրույց» ծրագրին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի տված հարցազրույցին, որտեղ վերջինս նշել էր, թե ԼՂ խնդրի շուրջ ընթացող բանակցությունների դանդաղումը պայմանավորված է նրանով, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները և Հայաստանը նույնիսկ են մեկնաբանում համանախագահների կողմից առաջարկված սկզբունքները, իսկ Ադրբեջանը՝ այլ, նշեց:

«Մինսկի խմբի կողմից առաջ քաշված սկզբունքները բխում են միջազգային իրավունքի նորմերից, և միանգամայն հստակ է, որ ցանկացած համաձայնություն պետք է բխի այդ երեք սկզբունքներից՝ տարածքային ամբողջականություն, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառում և ինքնորոշում: Հաջողված բանակցային համաձայնության հիմքում պետք է

այս երեք սկզբունքները ներառված լինեն: Սա Մինսկի խմբի դիրքորոշումն է, ԱՄՆ-ի դիրքորոշումն է և կողմերը դրա մասին տեղյակ են»:

Անդրադառնալով նախագահի դիտարկմանը, թե ԼՂ խնդրի կարգավորման հարցում ջանքերի ավելացման խնդիր կա, Ջոն Յեֆերնը նշեց, որ համանախագահները եռանդազին աշխատում են, ինչի ապացույցն է նաև այն, որ վերջին մի քանի ամիսների ընթացքում երկու երկրների արտգործնախարարների հետ շուրջ 10 հանդիպում է տեղի ունեցել:

«Մինսկի խումբը գոհ էր, որ նույնըներին նախագահների միջև հանդիպում տեղի ունեցավ: Հուսով ենք որ նոր հանդիպում տեղի կունենա նախագահների միջև առաջիկա 1-2 ամիսների ընթացքում՝ Փարիզում: Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջեյմս Ուորլիքը կոչ է արել, որ ընդունեն նախագահ Օլանդի հրավերը, ինչը փաստացի արել են նաև մյուս համանախագահները», - ասաց նա և ընդգծեց, որ համանախագահները անում են ամեն ինչ, որ նպաստեն խնդրի խաղաղ կարգավորմանը, սակայն այն ինչը կորոշի բանակցային գործընթացի ելքը, կողմերի քաղաքական կամքն է:

HayNews.am

## Ադրբեջանը 900 անգամ խախտել է հրադադարը Արցախի ուղղությամբ

**Հունիս 28, 2014**

Արցախի ՊԲ օպերատիվ տվյալների համաձայն, հունիսի 22-ից 28-ն ընկած ժամանակահատվածում դարաբաղա-ադրբեջանական հակամարտ գորքերի շփման գծում հակառակորդի կողմից հրադադարի պահպանման ռեժիմը խախտվել է շուրջ 900 անգամ, որի ընթացքում, տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից, հայ դիրքապահների ուղղությամբ արձակվել է ավելի քան 8000 կրակոց:

ՊԲ առաջապահ գորամասերը հիմնականում հավատարիմ են մնացել հրադադարի պահպանման ռեժիմին եւ շարունակել վստահորեն իրականացնել մարտական հերթապահություն:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

# Արեւմտյան Հայաստան

## Թուրքիայում Մալաթիայի հայերի մեծ ժողով են անցկացրել



**Հունիսի 20, 2014**

Հունիսի 17-ին Մալաթիայի Ուսուցչի տանը կայացած՝ “Empati Düşünce Toplusuğu” («Էմպատիայի մտքի հանրություն») կազմակերպության ամենամյա հավաքի այս անգամվա օրակարգում է եղել «Մեր մալաթիացի հայ

համերկրացիները և վերստին համատեղ գոյությունը» թեման:

Akunq.net-ի հաղորդմամբ՝ հավաքին մասնակցած Մալաթիայի հայերի միության խորհրդի նախագահ Կարալիս Էվափանը իր ղեկավարած կազմակերպության վերաբերյալ տեղեկություններ հաղորդելուց հետո գոհունակություն է արտահայտել մալաթիացի համերկրացիների հետ միասին լինելու փաստից և հայտնել, որ իրենք Մալաթիա են եկել աշխարհի տարբեր ծագերից Արևմտյան Հայաստան ժամանած 80 հոգանոց խմբով:

Էվափանը նշելով, որ իրենց երկխոսությունը զարգացել է Մալաթիայի տեղական և վարչական ղեկավարների հետ, իր ուրախությունն է հայտնել քաղաքացիական հասարակական կազմակերպության ներկայացուցիչների հետ եւս կապեր հաստատելու հնարավորության համար: Մալաթիայի հայերի միության խորհրդի անդամ Հարութ Օզերը նույնպես ելույթ ունենալով՝ ասել է, որ 48 տարի անց Մալաթիա գալով՝ խիստ հուզվել է հատկապես իրենց հին թաղն այցելելուց և նախկին հարևաններին տեսնելուց հետո: Օզերը նաև շեշտել է, թե ինչպես Մալաթիայում, այնպես էլ Թուրքիայի բազմաթիվ այլ նահանգներում ոչնչացվել են հայկական գերեզմանոցները: Այս համատեքստում Մալաթիայի պահպանված հայկական գերեզմանոցը իրենց համար Մալաթիայի՝ հայրենի երկիր լինելու և իրենց՝ այդ հողին պատկանելու գրավականն է:

Օզերից հետո խոսքով հանդես եկած ճարտարապետ Գևորգ Օզքարազյոզը մասնակիցներին է ներկայացրել իր հոր պատմությունը, որը Մալաթիայից հեռանալուց հետո ապաստանել է Երեւանում: Օզքարազյոզը ներկաներին հայտնել է, որ Հայաստանի մայրաքաղաքում օթեւան գտած մալաթիացի հայերն այնտեղ մի թաղամաս են հիմնել՝ Մալաթիա անունով՝ այդ կերպ փորձելով թողափել այն մեծ կարոտը, որ տածում են հայրենի հողի հանդեպ: Ամենավերջում ելույթ ունեցած Մալաթիայի հայերի միության՝ Մալաթիայում ներկայացուցիչ, գործարար Մերդար Բոյաջընը նշել է, թե չնայած անցյալում իրենց քաշած բոլոր նեղություններին՝ երբեք չեն մտածել լքել հայրենի երկիրը՝ ցանկանալով ապրել ու թաղվել հենց այս հողերում: Ժողովի ընթացքում քննարկվել են նաև Թուրքիայում ժողովրդավարացման գործընթացի, նոր սահմանադրության կառուցվածքի, իրավունքների և ազատությունների ընդլայնման, քաղաքացիության սահմանման՝ էթնիկ շեշտադրումներից ազատվելու անհրաժեշտության հետ կապված հարցեր:

Լուրեր Չայաստանից - NEWS.am

**Դերսիմում բացառապես հայերով բնակեցված գյուղ կարող է հիմնվել**



Հունիսի 09, 2014

Դերսիմում, Վաքրֆլը գյուղի նման, բացառապես հայերով բնակեցված գյուղ կարող է հիմնվել: Այդ մասին, Akunq.net-ի փոխանցմամբ, հայտարարել է Դերսիմի հայերի հավատքի եւ սոցիալական փոխօգնության միության ներկայիս նախագահ Իսմայիլ Ջեմ Հալավուրթը: Դերսիմահայերը սույն թվականի մայիսի 3-ին հավաքվել են Ստամբուլի Գում Գափու (Բում քաղաք) թաղամասի

մոտակայքում գտնվող Սուրբ Հարություն եկեղեցու սրահում: Ծուրջ 250 հոգու մասնակցությամբ կայացած երեկոյին մասնակցել են նաև եպիսկոպոս Սահակ Մաշայանը, Սասունահայերի միության նախագահ Արամ Դեմիրը, Գում Գափուի վարչաժողովի ղեկավարներից Արուշ Թաշը, ինչպես նաև՝ բազմաթիվ դերսիմահայեր:

Երեկոյին ելույթ ունեցած Իսմայիլ Ջեմ Հալավուրթը հայտնել է, թե սույն պաշտոնին նշանակվելուց հետո միությունն այցել է կատարել Պոլստ հայոց պատրիարքարան եւ մի քանի այլ հաստատություններ, որոնց հետ հաստատվել են փոխադարձ վստահության վրա հիմնված հարաբերություններ:

Միության նախագահը նաև տեղեկություններ է հաղորդել կազմակերպության առաջիկա ծրագրերի վերաբերյալ, ըստ որոնց՝ շուտով վախճանված դերսիմահայերի հոգիների խաղաղության համար հոգեհանգստյան արարողություն է կազմակերպվելու, իսկ առաջիկա տարիներին միությունը 4-5 օրով ուխտագնացություններ է կատարելու դեպի Դերսիմ՝ այդպիսով ամրապնդելով հայրենի հողից հեռացած դերսիմցիների կապը ծննդավայրի հետ:

Ըստ Իսմայիլ Ջեմ Հալավուրթի՝ միությունը ծրագրում է նաև այցելել Երեւան եւ աշխատանքներ տանում՝ «Դերսիմսպոր» եւ «Արարատ» ֆուտբոլային թիմերի միջև բարեկամական խաղ կազմակերպելու ուղղությամբ:

Միության ղեկավարության օրակարգում է նաև 1938 թ. Դերսիմի կոտորածի ժամանակ ռմբակոծված Սուրբ Կարապետ հայկական վանքի վերանորոգումը եւ վերաբացումը:

Հալավուրթի ելույթում ամենաուշագրավ թեման հայկական գյուղի մասին ծրագիրն է: Դերսիմահայերի միության նախագահն այդ ծրագրի վերաբերյալ մասնավորապես նշել է. «Թերեւս ոչ մտ ժամանակներս, սակայն երկարաժամկետ ծրագրում պլանավորում ենք մի հայկական գյուղ հիմնել Դերսիմում, որը ստեղծվելիք կոռպորատիվների եւ ձեռնարկությունների միջոցով կարող է ապահովել ինքն իրեն: Այդ գյուղն Անատոլիայում (Արևմտյան Հայաստանում-խմբ.) խորհրդանշական կդառնա եւ կլինի երկրորդ հայկական գյուղը՝ Վաքրֆլրից հետո »:

Հալավուրթը նաև նշելով, որ Դերսիմը հայկական օջախ է եղել, շեշտել է. «1915-ին եւ դրանից հետո տեղի ունեցած դեպքերի ժամանակ կյանքը կորցրած մարդկանց հոգիներն սկսել են խաղաղություն գտնել: Մեր միությունը, որպես Անատոլիայում ապրած հայ ժողովրդի մի փոքրիկ մասնիկ, շարունակելու է տեր կանգնել իր հողին, անցյալին եւ ինքնությանը»:

Երեկոյին մասնակցել է նաև համշենահայկական «Վոլա» խումբը, որը հանդես է եկել համշենական երգերի կատարմամբ:

Լուրեր Չայաստանից - NEWS.am

**Դիարբեքիի հայկական եկեղեցում պատարագ է մատուցվել**

Հուլիսի 01, 2014 | 10:17

Դիարբեքիի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցում Պոլստ հայոց պարիարքական փոխանորդ, արք. Արամ Աթեշյանի գլխավորությամբ պատարագ է իրականացվել:

Ինչպես տեղեկացնում է թուրքական Taraf-ը, Դիարբեքի պայեղած եւ պատարագն իրականացրած Պոլստ հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ, արք. Արամ Աթեշյանը յրագորդների հետ գրույցում նշել է, թե պատարագին մասնակցել են Դիարբեքիից հեռացածների երեխաները:

Արքեպիսկոպոս Աթեշյանի խոսքով իրենց համար մեծ երջանկություն է, որ Մերձավոր Արևելքի ամենամեծ հայկական եկեղեցում շարունակվում են պատարագներ եւ տիրում է հոգեւոր մթնոլորտ:



Նշենք, որ 1400 հավատացյալների համար նախատեսված Դիարբեքիի Սուրբ Կիրակոս եկեղեցին կառուցվել է 1376թ.՝ Հանչեփեք թաղամասում, որը տեղի մահմեդականներն անվանում են «գյավուրների թաղամաս», քանի որ այստեղ մինչև Հայոց ցեղասպանությունը բազմաթիվ քրիստոնյաներ են ապրել: «Սուրբ Կիրակոս» եկեղեցին 1980 թ.-ից ճակատագրի քմահաճույքին էր մատնվել: Սակայն Ստամբուլում բնակվող Դիարբեքիի հայերը եկեղեցու վերանորոգման համար ստեղծել էին «Սուրբ Կիրակոս» հիմնադրամը: Ծախսերի 70% -ն իր վրա է վերցրել հիմնադրամը, իսկ 30% -ը՝ Դիարբեքիի քաղաքապետարանը:

Լուրեր Ֆայաստանից - NEWS.am

## Թուրքիայում հայերով բնակեցված շրջանում երկրաշարժ է տեղի ունեցել

Հունիս 09, 2014

Միրիայի հետ սահմանակից Թուրքիայի Հաթայ նահանգի Իսքենդերունի (Ալեքսանդրետի սանջակ-խմբ) ծոցում, հունիսի 9-ին, 4,6 մագնիտուդով երկրաշարժ է գրանցվել: Թուրքական Samanyolu կայքի փոխանցմամբ՝ Թուրքիայի երկրաշարժերի հետազոտման ինստիտուտի տվյալներով հունիսի 9-ի առավոտյան՝ 06:38-ին, Հաթայ նահանգի Դորթոյի շրջանից 15 կմ արևմուտք, 17,6 կմ խորության տակ 4,6 մագնիտուդով երկրաշարժ է տեղի ունեցել: Երկրաշարժը խուճապ է առաջացրել Էրզինի, Դորթոյի եւ Իսքենդերունի բնակիչների մոտ, ովքեր սարսափահար տներից դուրս են եկել եւ ժամերով մնացել փողոցում: Նշենք, որ Հաթայ նահանգում է գտնվում Թուրքիայի միակ հայկական գյուղը՝ Վազըֆը:

Լուրեր Ֆայաստանից - NEWS.am

## Թուրքիայում ավագ բուժքույրը գիրք է գրել Տեղասպանությունից փրկված իր հայ տատիկի մասին

Հունիսի 10, 2014

Թուրքիայի մասնավոր հայտնի հիվանդանոցներից մեկի ավագ բուժքույր Այսել Քարսլըն ներկայացրել է իր Վարդանուշ անունով իր հայ տատիկի կյանքի մասին պատմող գիրքը: Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Անկարայի Lokman Hekim Etilik հիվանդանոցի ավագ բուժքույր Այսել Քարսլըն հանդիսավոր պայմաններում եւ ընթերցողների մեծ ակտիվ

մասնակցությամբ իրականացրել է իր գրքի շնորհանդեսը եւ վաճառել գիրքն իր ստորագրությամբ:



Այսելը նշել է, որ «Վարդանուշի Ալին» գրքում ներկայացրել է Վարդանուշ անունով իր հայ տատիկի կյանքը: Նշվում է, որ առաջիկա օրերին Այսել Քարսլըն մասնակցելու է նաև Ստամբուլում, Բուրսայում, Մալաթիայում եւ Գիբեսունում կազմակերպվող շնորհանդեսներին, որի ժամանակ եւս գրքերը վաճառելու է իր ստորագրությամբ:



Լուրեր Ֆայաստանից - NEWS.am

## Թուրքիայում հայկական դպրոցները ուսուցիչների խիստ կարիք ունեն

Հունիսի 19, 2014

Թուրքիայում «Հիմնադրամների միջև համերաշխության եւ հաղորդակցության պլատֆորմը»-ը (VADIP) հայտարարություն է տարածել, որում նշվել է, որ Ստամբուլի հայկական դպրոցները ուսուցիչների մեծ կարիք ունեն: Ստամբուլի հայկական «Ակոս»-ի փոխանցմամբ՝ «Հիմնադրամների միջև համերաշխության եւ հաղորդակցության պլատֆորմը»-ը Ստամբուլի հայկական դպրոցներում իրականացրած ուսումնասիրություններից հետո ներկայացրել է զեկույց: Չեկույցում նշվել է, որ առաջիկա 2 տարվա ընթացքում հայկական դպրոցներին անհրաժեշտ է ինելու տարրական

դպրոցներում դասավանդող 20 եւ տարբեր առարկաներ դասավանդող 143 ուսուցիչ:



VADIP-ի հանձնաժողովի անդամ Կարո Փայլանը նշել է, թե ուսուցիչներ գտնելու հետ մեկտեղ իրենց նպատակն է նաեւ բարձրացնել ուսուցիչների մասնագիտական պատրաստվածությունը եւ միմյանց միջեւ մասնագիտական մրցակցությունը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

### Ինչպիսին են հայրության խնդիրներն ու իրավունքները Թուրքիայի Հանրապետությունում



Հունիսի 26, 2014

Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնում հունիսի 25-ին հրավիրված միջոցառման ընթացքում ներկայացվեցին Համշենը, համշենահայությունն ու նրա մշակույթը:

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հասարակայնության հետ կապերի ծառայությունից հայտնում են, թե երեկոյի ընթացքում ցուցադրվեց թուրքագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Լուսինե Սահակյանի «Համշենը անցյալի եւ ներկայի խաչմերուկներում» վավերագրական ֆիլմը:

Միջոցառումը կազմակերպել էր «Հասարակություն եւ մշակույթ» ՀԿ-ն Հայաստանի երիտասարդական հիմնադրամի՝ որպէս ՀՀ նախագահի գործընկեր կազմակերպության հայտարարած դրամաշնորհային մրցույթի շրջանակներում: «Հասարակություն եւ մշակույթ» ՀԿ-ն Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի հետ համագործակցաբար հասարակության տարբեր շերտերին ներկայացնում է հայության խնդիրներն ու իրավունքները Թուրքիայի Հանրապետությունում:

Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի թուրքերեն բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Մելինե Անոււյանը նկատում է, որ Թուրքիայում բնակվող համշենցիներն առանձնահատուկ են իսլամացած եւ ծայտյալ հայերի շրջանում: Նրանց մի մասը հայախոս է՝ հաղորդակցվելով հայկական բարբառներից մեկով:

Թուրքագետը նշում է, որ բացի Թուրքիայից՝ առկա են համշենցիների խմբեր Միջին Ասիայում, Աբխազիայում, Ռուսաստանում: Հետխորհրդային շրջանում բնակվող համշենահայերը քրիստոնյա են, հայախոս եւ իրենց համարում են հայ: Ինչ վերաբերում է Թուրքիայի համշենցիներին, ապա նրանց մի մասն ընդունում է իր հայկական ծագումը, մյուս մասը՝ ոչ: Թուրքագետը նկատում է, որ այս հարցում համշենցիները թերեւս մեղավոր չեն, քանի որ տարիներ շարունակ թուրքական պատմագրությունը նրանց մեջ մտցրել է այն գաղափարը, թե իբր համշենցիները թուրքական ցեղի մի տեսակ են: Եվ նրանց համար դժվար է միանգամից կարծրատիպերը հաղթահարել: Այնուամենայնիվ, վերջին տասնամյակում որոշ տեղաշարժեր նկատվում են: Համացանցի, հաղորդակցման միջոցների զարգացման, հայ գիտնականների ուսումնասիրությունների ու այցելությունների շնորհիվ համշենցիները տեղեկանում են իրենց ծագման մասին:

«Համշենը անցյալի եւ ներկայի խաչմերուկներում» ֆիլմի հեղինակ Լուսինե Սահակյանը կինոնկարի ցուցադրումից հետո պատասխանեց հանդիսատեսի հարցերին: Նա մասնավորապես նշեց, որ ֆիլմն արժանացել է Հոլիվուդում անցկացվող «Արփա» միջազգային կինոփառատոնի Արմին Վեգների անվան հեղինակավոր մրցանակին: Այն ցուցադրվել է նաեւ «Ռսկե ծիրան» երեսնյան միջազգային, Նյու Յորքում կայացած «Socially Relevant Films» կինոփառատոններում, Տորոնտոյի «Նու» փառատոնում, Պրահայում եւ այլն: Այսօր արդեն ֆիլմի տիտրերը թուրքերեն թարգմանելու մտադրություն կա:

Նշենք, որ ֆիլմում տեղ են գտել դրվագներ Համշենի հայկական երբեմնի հզոր իշխանության պատմության, նրա բնակիչների բռնի իսլամացման մասին: Ռիզեի եւ Արդվինի նահանգներում կատարված բացառիկ նկարահանումների շնորհիվ հանդիսատեսը ծանոթանում է Խոփայի, Չամլիհեմշինի, Արդաշենի, Չայելիի գավառների համշենցիների պարերի, երգերի, նրանց խոսվածքի ու բանահյուսության, հավատալիքների, զբաղմունքի, ինչպէս նաեւ խոհանոցի հետ: Ներկայացվում են նաեւ ինքնության հետ կապված համշենցիների ընկալումներն ու նրանց ժողովրդագրական պատկերը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

### Միջազգային

#### ԻՇԻՊ-ը հայտնել է Ստամբուլը վերցնելու մտադրության մասին

Հունիս 19, 2014

Թուրքիայի անվտանգության ուժերի հետախուզական աշխատանքների արդյունքում պարզվել է, որ «Իրաքում եւ Շամում (Լեւենտում) իսլամական պետություն» խմբավորումը Միրիայում եւ Իրաքում «ջիհադ» (սրբազան պատերազմ) հայտարարելուց հետո Թուրքիան եւս հայտարարել է «ջիհադի» գոտի:

Թուրքական Taraf-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի մի շարք նահանգներում ԻՇԻՊ-ի դեմ իրականացված գործողություններում արդյունքում հայտնի է դարձել, որ կառույցը 2 տարուց ավել Թուրքիայում ԻՇԻՊ-ի համար զինյալներ է հավաքագրում: Հայտնաբերված տեսագրություններում եւ փաստաթղթերում նշվել է նաեւ, որ Միրիայի եւ Իրաքի պես, Թուրքիան եւս «ջիհադի» գոտի է հայտարարվել, իսկ տեսագրություններից մեկում

Թուրքիայում ԻՇԻՊ-ի կառույցի հրամանատար Հայիս Բայանջուկն ասել է. «Ինչպահ, Ստամբուլն էլ ենք վերցնելու»:



Նշենք, որ մասնույում բազմաթիվ հրապարակումներ կան, որ Միրիայում Ասադի կառավարության դեմ պայքարող ԻՇԻՊ-ին լուրջ աջակցություն է ցույց տվել Թուրքիան:

**Այս հրաշալի մզկիթը հայ է կառուցել. Էրդողան**



Հունիսի 07, 2014

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Ստամբի Օրթաքոյի մզկիթի վերաբացման ժամանակ հայտարարել է, որ այն կառուցվել է հայ ճարտարապետի կողմից: Թուրքական Եսցտ պարբերականի փոխանցմամբ՝ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը եւ մի շարք նախարարներ մասնակցել են Օրթաքոյի պատմական մզկիթի վերաբացմանը: Վարչապետ Էրդողանը, խոսելով մզկիթի կառուցման պատմությունից՝ նշել է. «Այս հրաշալի մզկիթը կառուցել է մի հայ ճարտարապետ: Այս մզկիթը մյուս մզկիթների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում եւ պետք է արժանին մատուցենք այս կառույցի ճարտարապետին եւ շինարարներին», -ասել է Էրդողանը՝ հիշեցնելով, որ խոսքը Բայանջուկի մասին է:

Նշենք, որ Օսմանյան կայսրությունում Բայանջուկի ընտանիքի անդամները նախագծել եւ կառուցել են բազմաթիվ շենքեր, կամուրջներ, պալատներ, եկեղեցիներ եւ մզկիթներ:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

**Թուրքերը Տեղասպանության ճանաչման դեմ ֆիլմ են նկարում. Իմ սրտի ճաքը**

Հունիսի 07, 2014

Թուրքիայի վարչապետի խորհրդականներից Իբրահիմ Քալընը հայտարարել է, որ Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարի շրջանակներում առաջիկա ամիսներին ֆիլմի նկարահանումներ են սկսվելու:



Ինչպես տեղեկացնում է թուրքական Hürriyet-ը, Թուրքիայի վարչապետի խորհրդականներից Իբրահիմ Քալընը Թուրքիայի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում ելույթով է հանդես եկել՝ ներկայացնելով Հայոց ցեղասպանության դեմ պայքարի աշխատանքների վերաբերյալ տեղեկություններ:

Իբրահիմ Քալընը նշել է, թե ամիսներ անց սկսվելու է Հայոց ցեղասպանության փաստը ժխտող գեղարվեստական ֆիլմի նկարահանման աշխատանքները՝ շեշտելով, որ ֆիլմի անունը լինելու է «Իմ սրտի ճաքը»:

Ընդդիմադիր «Ժողովրդա-հանրապետական» եւ «Ազգայնական շարժում» կուսակցության պատգամավորներն առարկել են ֆիլմի անվան հետ կապված՝ պնդելով, թե վերնագիրը հուշում է ինչ-որ սիրո մասին, սակայն այն պետք է ավելի լուրջ վերնագիր ունենա:

Թուրքիայի պատմագիտական ընկերության նախկին նախագահ, «Ազգայնական շարժում» կուսակցության պատգամավոր Յուսուֆ Հալաչոլուն նշել է, թե լավ կլիներ իրեն խնդրելին ֆիլմի պլուժին եւ ինքը կտրամադրի իրական փաստերի հիման վրա «Մուսա լեռ» եւ «Վանի ապստամբություն» վերնագրերով ֆիլմերի սցենարներ:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

**Աթաթուրքը Կարաբեքի փաշային մեղադրել է հայերի հանդեպ ստորուլթյուն անելու մեջ**



Հունիսի 06, 2014

Թուրքիայի արեւելյան Ադրբի (պատմական Բագավանի մոտ-խմբ) նորընտիր քաղաքապետ Սըրրը Սաքքըը շարունակում է սկանդալային հայտարարություններ անել Քարաբեքի փաշայի հետ կապված, ինչը մեծ աղմուկ է բարձրացրել Թուրքիայում:

Թուրքական CNNturk-ի եթերում Ադրբի քաղաքապետ Սըրրը Սաքքըը պնդել է, թե ինքը դեմ է, որ իր քաղաքում մնա Կարաբեքի փաշայի արձանը, քանի որ ինքը գիտի իրական պատմությունը: Քուրդ քաղաքապետը հիշեցրել է, որ Ադրբ քաղաքի կենտրոնում տեղադրված են 1930-ականներին քրդերին կոտորած թուրք զինվորականների արձանները, որոնք Կարաբեքի փաշայի արձանի հետ միասին հանվելու են քաղաքի փողոցներից:

Սըրրը Սաքքըը հիշեցրել է նաև Աթաթուրքի խոսքերն ուղղված Կարաբեքի փաշային կապված Հայոց

ցեղասպանության հետ: «Դուք տեսեք, թե 1915-ի իրադարձությունների հետ կապված ինչ է ասել Աթաթուրքը Կարաբեքիր փաշային: «Դուք հայերի հանդեպ ստորություն եք արել»: Այո, հենց այդպես է ասել», - եղբերում ասել է Սըրըր Մաքրըր:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

**Իրանի նախագահը Անկարայում խախտել է ավանդույթը եւ հրաժարվել այցելել Աթաթուրքի դամբարան**



Հունիսի 09, 2014

Իրանի նախագահ Հասան Ռուհանիի՝ Անկարա կատարած այցի ընթացքում Թուրքիայում առաջին անգամ արարողակարգային ավանդույթ է խախտվում: Իրանի նախագահը չի այցելելու Աթաթուրքի դամբարան: Թուրքական Yeniakit կայքի փոխանցմամբ՝ Թուրքիայում օտար երկրների նախագահների այցելությունը սկսվում է Թուրքիայի հանրապետության հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի դամբարան այցով, սակայն պաշտոնական այցով Թուրքիա ժամանած Իրանի նախագահ Հասան Ռուհանին խախտել է այդ ավանդույթը եւ չի այցելել Աթաթուրքի դամբարան: Թուրքիայի նախագահի մամուլի պատասխանատու Ահմեդ Մեւերը Anadolu գործակալության թղթակցի հետ գրույցում նշել է, թե Թուրքիայի եւ Իրանի նախագահների հանդիպման արարողակարգային ծրագրում չի ներառվել Աթաթուրքի դամբարան այցելությունը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

**Սերժ Սարգսյանի հրավերի երկու նպատակները. թուրք նախկին դեսպանի հոդվածը**

Հունիս 10, 2014

Թուրքիայի նախագահին 2015թ. ապրիլի 24-ին Հայաստան հրավիրելու Սերժ Սարգսյանի հրավերում առկա է 2 նպատակ: Այս մասին ermenihaber.am-ի փոխանցմամբ, ամերիկաբնակ թուրքերի Turkishny.com լրատվական և վերլուծական կայքում հրատարակված «Սարգսյանի հրավերը» վերտառությամբ հոդվածում գրել է թուրք պաշտոնաթող դեսպան Օմեր Էնգին Լյութենը: Ըստ նախկին դիվանագետի՝ ՀՀ նախագահի հայտարարությունը հետևյալ նպատակներն է հետապնդում.  
«1. Ցույց տալ, որ անընդունելի է ապրիլի 23-ին Թուրքիայի վարչապետ Էրդողանի հղած նմանօրինակ ցավակցական ուղերձի միջոցով կարգավորման նոր քաղաքական գործընթացի սկսումը:  
2. Նվազագույնից քայլի մղել Թուրքիայի նախագահին: 1915-ի դեպքերը ցեղասպանություն չճանաչող երկրի նախագահին ապրիլի 24-ին Երևան հրավիրելու միջոցով

ցեղասպանությունը ճանաչել տալն այլ բան չի կարող նշանակել»:



Լյութենը նշում է, որ ՀՀ նախագահի հրավերը թեև սենսացիոն բնույթ ուներ, բայց այն Թուրքիայի ոչ քաղաքական, ոչ էլ հասարակական շրջանակներում ըստ էության ուշագրավ արձագանք չգտավ: Դա, թերևս, բացատրվում է Թուրքիայի քաղաքական օրակարգի ծանրաբեռնվածությամբ:

Թուրք նախկին դիվանագետը դեմ է, որ Թուրքիայի նախագահը հրավերն ընդունի և մեկնի Հայաստան, քանի որ, ըստ նրա, դա ավելի մեծ հնչեղություն կհաղորդի Ցեղասպանության ճանաչմանն ուղղված հայերի գործողություններին: Լյութենը հիշեցնում է, որ Հայոց ցեղասպանությունը օրենսդրորեն ճանաչել է 2 տասնյակ երկիր, բայց նրանցից ոչ մեկը Թուրքիայի առաջ չի բարձրացրել հատուցման կամ հողերի վերադարձման խնդիր, ակնարկ չի արվել նույնիսկ: Հոդվածի հեղինակը պնդում է, թե Ցեղասպանության ճանաչման հայկական պահանջը չունի իրավական հենք, ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիայի մատնանշած անհրաժեշտ դատավճիռը չկա, իսկ հայ-թուրքական սահմաններն ամրագրված են Կարսի պայմանագրով, Լոզանի պայմանագիրն էլ պատերազմից հետո հատուցում կատարելու գործողություն չի նախատեսել Թուրքիայի համար:

Այսպիսի դատողություններով թուրք դիվանագետը եզրակացության է գալիս, թե իրավական հարթությունում չկա հայկական հարց: Ըստ նրա՝ հայերը, օգտվելով Ցեղասպանության հարցի արձարծումից, փորձում են քաղաքական հարթությունում հայկական հարց ստեղծել, որը հարկ եղած ժամանակ որպես լծակ կկիրառվի Թուրքիայի վրա:

Հոդվածագիրը նաև ուշադրություն է հրավիրում իր դիտարկած հետևյալ հանգամանքի վրա. «Սերժ Սարգսյանը 2010 թվականից հետո, երբ արձանագրությունների գործընթացն ավարտին չհասցվեց, փոփոխություն է մտցրել Թուրքիայի նկատմամբ որդեգրած դիրքորոշման մեջ:

Նոր գործելաոճով հանդես եկող ՀՀ նախագահը չի ընդունում հաշտեցմանն ուղղված Թուրքիայի նախաձեռնությունները: Բացի այդ էլ աջակցում է սփյուռքից հնչող պահանջատիրությանը»:

Նախկինում Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Լիբիայում և Վատիկանում դիվանագիտական առաքելություններ կատարած Օմեր Էնգին Լյութեն այժմ ղեկավարում է «Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոն»-ի (ASAM) շրջանակներում գործող «Հայկական հետազոտությունների ինստիտուտ»-ը (ERAREN):

Լուրեր Հայաստանից - NEWS.am

**Թուրք հայտնի երգչուհին բեմում հայերեն է երգել եւ արտասվել**



Հունիսի 10, 2014

Թուրք հայտնի երգչուհի Սեզեն Աքսուն Գերմանիայի Մյունխեն քաղաքում համերգի ժամանակ կատարել է հայերեն, քրդերեն եւ թուրքերեն երգեր:

Թուրքական T24.com կայքի փոխանցմամբ՝ Մյունխենում կազմակերպված համերգի ժամանակ թուրք հայտնի երգչուհի Սեզեն Աքսուն կատարել է Ահմեդ Բայայի «Արտասվելիս» ստեղծագործությունը, որի երաժշտությունը գրել է Արա Դինքջյանը:

Կատարման վերջում Սեզեն Աքսուն իրեն չի կարողացել զսպել եւ արտասվել է եւ ասել. «Մարդկանց սիրեք մարդ լինելու համար»: Հանդիսատեսն իր հերթին պատասխանել է երգչուհուն՝ կատարելով երգչուհու «Դու մի արտասվիր» երգը:

Համերգի ժամանակ երգչուհին կատարել է նաեւ հայերեն եւ քրդերեն երգեր:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

**PKK-ն հայտարարել է, որ ապահովելու է Իրաքում ապրող բոլոր ժողովուրդների, այդ թվում հայերի անվտանգությունը**



Հունիսի 12, 2014

Իրաքի Մոսուլ քաղաքը գրաված ահաբեկչական «Իրաքում եւ Շամոմ իսլամական պետություն» (ԻՇԻՊ) խմբավորման գրոհայիններից Հյուսիսային Իրաքում ապրողների անվտանգության ապահովման համար PKK-ի զինյալները շարժվում են ԻՇԻՊ-ի գրոհայիններին ընդառաջ: Թուրքական Radikal-ի փոխանցմամբ՝ Հյուսիսային Իրաքի Քանդիի լեռներում գտնվող PKK-ի (Քուրդիստանի բանվորական կուսակցություն-խմբ) ղեկավարությունը հայտարարություն է տարածել՝ նշելով, որ պատրաստ են

ղիմագրավել ԻՇԻՊ-ի գրոհայինների հարձակումներին ապահովելով Հյուսիսային Իրաքում ապրող քրդերի, արաբների, թուրքմեններ եւ հայերի անվտանգությունը:

Նշենք, որ Հյուսիսային Իրաքի՝ Քուրդիստանի ինքնավար հատվածի ղեկավարությունը երկրի զինված ուժերը կազմող փեշմերգեների մեծ թվով գորամիավորումներ է փոխադրում ԻՇԻՊ-ի գրոհայիններին ընդառաջ:

Փեշմերգեների հետ միասին շարժվում են նաեւ PKK-ի զինյալները:

**Ստամբուլում հայաստանցի հայր ու որդու են դանակահարել. հայրը մահացել է**



Հունիսի 15, 2014

Ստամբուլի Քումքափը թաղամասին կից ծովափին դանակարվել են հայաստանցիներ, որոնցից մեկի կյանքը փրկել չի հաջողվել:

Թուրքական Medya73 կայքի փոխանցմամբ՝ Ստամբուլում անօրինական ապրող Հայաստանի քաղաքացի Համբարձում Հարությունյանը որդու՝ 11-ամյա Գառնիկ Հարությունյանի եւ մի քանի այլ անձանց հետ այցելել են Քումափը թաղամասին կից ծովափ, որտեղ դեռեւս անհայտ պատճառներով վիճաբանություն է տեղի ունեցել:

Վիճաբանությունը թեժացել է, որի ընթացքում դանակարվել են հայր ու որդի Հարությունյանները: 36-ամյա Համբարձում Հարությունյանի կյանքը չի հաջողվել փրկել: Նրա որդին եւ եւս մեկ այլ հայ՝ Մարտին անունով, տեղափոխվել են հիվանդանոց: Մարտինը հայտնել է, թե երեք հոգի իրենց դանակահարել եւ հեռացել են:

Ականատեսները պնդում են, թե դանակահարողները եւս Հայաստանցի են եղել, ովքեր նույնպես անօրինական են գտնվում Թուրքիայում:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

**ԻՇԻՊ-ը Թուրքիայի նկատմամբ էլ հողային պահանջ ունի**

Հունիսի 19, 2014

Վերջին օրերին Իրաքում մեծ հաջողություններ գրանցած ահաբեկչական «Իրաքում եւ Շամոմ (Լեւենտում) իսլամական պետություն» խմբավորման Twitter-ի էջում հրապարակվել էր այն երկրների քարտեզը, որոնցում նախատեսում են շարիաթով շարժվող պետություններ ստեղծել:

ԻՇԻՊ-ի հրապարակած քարտեզը շարունակում են քննարկվել սոցկայքերում, իսկ թուրքական կայքերը նաեւ անհանգստություն են հայտնում, որ փաստացի ԻՇԻՊ-ը հողային պահանջ ունի Թուրքիայի նկատմամբ:

Թուրքական Sozcua-ն նշել է, թե ԻՇԻՊ-ը Թուրքիայից պահանջում է միայն Հայթայ նահանգը՝ նշելով նաեւ մյուս



երկրների ցանկը, որոնց նկատմամբ ԻՇԻՊ-ը ունի հավակնություններ. Պաղեստին, Հորդանան, Լիբանան, Սիրիա, Սինայի թերակղզի:



ԻՇԻՊ-ը որոշ կայքեր ներկայացնում են նաև ԻԼԻՊ (Իրաքում եւ Լեւնտում իսլամական պետություն) անունով: Լեւնտը տարածաշրջանի պայմանական անվանում է, որի ոչ հստակ սահմանները սկսում են Տավրոսի լեռնաշղթայի հարավային հատվածով եւ ներառում Մերձավոր Արեւելքի մի զգալի հատված: Արեւմուտքում նրա սահմանները Սիջերկրական ծովն է, հարավում՝ Արաբական սարահարթը, արեւելքում՝ Միջագետքը:

**Սիրիահայ. Քեսաբի ահաբեկիչները Նորից Թուրքիա են վերադարձել**



Հունիսի 17, 2014  
Քեսաբից փախչելուց առաջ ահաբեկիչները ավերել եւ այրել են հայկական բոլոր եկեղեցիները, ավերել նույնիսկ հայկական գերեզմանները, հունիսի 17-ի մամուլի ասուլիսում հայտնել է Մոցիալ-դեմոկրատական-Հնչակյան կուսակցության նախագահի տեղակալ, սիրիահայ Վազգեն Մեսրոպյանը:  
Ըստ նրա՝ Սիրիայի բանակը ազատագրել է ողջ Քեսաբի շրջանը, իսկ ահաբեկիչները փախել են դեպի Թուրքիայի սահման: «Ճիշտ է, արեւմտյան բոլոր լրատվամիջոցները տեղեկություն են տարածել, որ սահմանը հասցրել են փակել՝ թույլ չտալով ահաբեկիչներին այն անցնել, սակայն դրանք կեղծ տեղեկություններ են: Թուրքիան բացել է սահմանը, եւ ահաբեկիչները նորից վերադարձել են նրա տարածք, իսկ նրանց մյուս մասը՝ Սիրիայի այլ նահանգներ», - նշել է Մեսրոպյանը:  
Հիշեցնենք, որ օրերս Սիրիայի՝ ահաբեկիչների կողմից գրավված հայերով եւ պալեստինցիներով բնակեցված Քեսաբ շրջանը ազատագրվել է Սիրիայի զորքերի կողմից:

**Փորձագետ. Թուրքիան ծրագրել էր վերահսկողության տակ վերցնել Սիրիայի հյուսիսային շրջանները**



Հունիսի 17, 2014  
Եթե միջազգային հանրության կողմից աղմուկ չբարձրանար (Քեսաբի հարցը քննարկվել եւ դատապարտվել է տարբեր միջազգային կազմակերպություններում), ապա Թուրքիան կիրականացներ իր ծրագիրը: Այդ մասին հունիսի 17-ի մամուլի ասուլիսի ընթացքում հայտարարեց Գիտությունների ազգային ակադեմիայի արեւելագիտության ինստիտուտի տնօրեն, թուրքագետ Ռուբեն Մաֆրաստյանը:  
Նրա խոսքով՝ Թուրքիայի ծրագիրը բաղկացած էր երկու մասից՝ ռազմավարական եւ մարտավարական: «Ռազմավարականն այն է, ինչ Թուրքիան ծրագրել էր «Ջեբաթ ան-Նուսրա» կազմակերպության օգնությամբ. հարված հասցնել Լաթաքիա նահանգին, որից հետո Սիրիայի հյուսիսային, մերձծովյան շրջանները վերահսկողություն տակ վերցնել: Եվ երկրորդ մասը, իհարկե, Քեսաբի՝ գլխավորապես հայերով բնակեցված շրջանի գավթումն էր», - նշեց Ռուբեն Մաֆրաստյանը:  
Հիշեցնենք, որ մարդի 21-ին սիրիական ընդդիմության հանցավոր խմբավորումների կողմից գլխավորապես հայերով բնակեցված Քեսաբ քաղաքի վրա զանգվածային գրոհ էր իրականացվել: Քեսաբի բնակչության մեծ մասը տեղահանվել էր Լաթաքիա քաղաք: Նախօրեին Քեսաբը ազատագրվել էր կառավարական զորքերի կողմից:

**Աշոտ Մանուչարյան. Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ-ի ձեռքում է**



Հունիսի 25, 2014  
Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը Մեծ Բրիտանիայի եւ ԱՄՆ-ի ձեռքում է: Հունիսի 25-ի մամուլի ասուլիսին այսպիսի կարծիք հայտնեց «Վարաբադ» կոմիտեի նախկին անդամ, հասարակական-քաղաքական գործիչ Աշոտ Մանուչարյանը:

«Եթե Լոնդոնը եւ Սպիտակ տունը որոշեն, որ Յեղասպանությունը պետք է ճանաչվի, այն կճանաչվի, եթե անգամ մոլորակի վրա ոչ մի հայ չմնա: Բսկ եթե Անգլիան եւ Ամերիկան որոշեն, որ այն չպետք է ճանաչվի, ինչպես մինչ օրս են որոշել, ապա մենք չպետք է մեզ հիմարի տեղ դնենք եւ բղավենք, որպեսզի այդ ճիշերը չօգտագործվեն Թուրքիայի դեմ նոր խարդավանքների համար, ինչի հետեւանքով հարեւան պետությունը ավելի մեծ ատելությամբ է լցվում հայերի նկատմամբ», - համոզված է Մանուշարյանը: Այսպես, նրա կարծիքով, Յեղասպանության ճանաչման հարցը արդեն դրված է օրակարգում, «եւ պետք չէ ամբողջ օրը դրանով զբաղեցնել»: Ավելին, այս հարցի նախկին մոտեցումները բավականին հնացել են:

Մասնավորապես, Յեղասպանության 100-ամյա տարելիցը չպետք է դիտարկվի միայն որպես ողբերգական իրադարձությունների եւ դրան հետեւող փոխհատուցման վճարման հերթական հնարավորություն: «1915թ.-ից մենք կորցրել ենք միասնաբար ապրելու հնարավորությունը: Եվ Յեղասպանության 100-ամյա տարելիցը մեզ հնարավորություն է տալիս միավորվել: Եվ այդ նույն Ամերիկան եւ Անգլիան պատրաստ կլինեն դրան նպաստել»- եզրափակեց Մանուշարյանը:

**ԱՄՆ Կոնգրեսի հանձնաժողովը քվեարկել է Թուրքիայի քրիստոնեական եկեղեցիների մասին բանաձեւի օգտին**



Հունիսի 26, 2014

ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարցերի հանձնաժողովը կողմ է քվեարկել Թուրքիայում քրիստոնեական եկեղեցիների մասին բանաձեւին՝ մեկ ուղղումով:

Բանաձեւն ԱՄՆ պետքարտուղարությունից պահանջում է ամենամյա հաշվետվություն ներկայացնել Կոնգրեսին կառավարության ջանքերի մասին ուղղված Թուրքիայի հանրապետությունում եւ հյուսիսային Կիպրոսում թուրքական բանակի կողմից թալանված, բռնագրավված կամ այլ կերպ յուրացված քրիստոնեական սեփականության ուսումնասիրության, վերադարձն ապահովելու եւ պաշտպանությունը վերականգնելու մասին:

Հանձնաժողովում յուրմտերի ժամանակ նախագահ Էդ Ռոյսը նշել է, որ Թուրքիայում քրիստոնեական եկեղեցիների հետ կապված իրավիճակը վատթարանում է չնայած Անկարայի լավատեսական հայտարարություններին: Եվ չնայած Թուրքիայի կառավարության՝ եկեղեցիները վերաբացելու խոստումներին, այդ տեղի չի ունենում: Ավելին, Ռոյսի հավաստմամբ, բյուզանդական երկու եկեղեցիներ մզկիթի են վերածվել:

Կոնգրեսական Էլիոթ Հեյզելն իր հերթին նշել է, որ քրիստոնեական բազմաթիվ եկեղեցիներ, ներառյալ՝ հյուսիսային Կիպրոսի տարածքում գտնվող վանքերը, բռնագրավվել են:

Լուրեր Ֆայաստանից - NEWS.am

**Սիրիայում հայ զինծառայող է զոհվել**



Յունիսի 26, 2014

Սիրիական Իդլեբ նահանգի Խան Շեյխուն շրջանում սիրիական բանակի եւ ահաբեկիչների միջև ռազմական գործողությունների հետեւանքով հայ զինծառայող է զոհվել՝ 1986թ. ծնված Սեւակ Էղյւմեսեկյանը: Այդ մասին NEWS.am-ին հաղորդել են Հալեպում Հայ առաքելական եկեղեցու Բերիո թեմի մամուլի ծառայությունից: Նշվում է, որ զինծառայողը մահացել է մայիսի 25-ին, սակայն այդ մասին հայտնի է դարձել միայն հիմա: Սեւակ Էղյւմեսեկյանի հոգեհանգիստը տեղի կունենա հունիսի 27-ին Դամասկոսի Սր. Սարգիս եկեղեցում:

Հիշեցնենք, որ արյունալի իրադարձություններից առաջ Սիրիայում մոտ 60-70 հազար հայ էր ապրում: Ավելի քան կեսը ապրում էր Հալեպում, իսկ մյուս կեսը սփռված էր Լաթաքիա, Հոմս, Քամիշլի, Խասակ, Յակոբի, Քեսաբ քաղաքներում եւ իհարկե, մայրաքաղաք Դամասկոսում:

Լուրեր Ֆայաստանից - NEWS.am

**Օբամա. իրանցիները ստիպված կլինեն միանգամից մի քանի ճակատով պատերազմել**



Յունիսի 20, 2014

Իրանը կարող է կառուցողական դեր խաղալ իրաքյան ճգնաժամի լուծման հարցում, եթե Թեհրանը հետեւի Վաշինգտոնի օրինակին՝ հանդես գալով իրաքյան ամբողջ հասարակության հետաքրքրություններին համապատասխան գործող Իրաքի ներառական կառավարության օգտին: Այս մասին հայտարարել է ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման:

Նախագահը, միաժամանակ, նշել է, որ Իրանը կարող է վատթարացնել իրադրությունը, եթե իրադարձություններին մասնակցի միայն որպես ռազմական ուժ, որն աջակցում է Իրաքի կառավարությունում ընդգրկված շիա առաջնորդներին: «Ամերիկայի ձայն»-ի փոխանցմամբ, Սպիտակ տան ղեկավարն ընդգծել է, որ Վաշինգտոնը Թեհրանի հետ բանակցություններում հասկացրել է, որ անհրաժեշտ է խուսափել այնպիսի քայլերից, որոնք խրախուսում են կրոնական հողի վրա պատակտումը, քանի որ նման իրավիճակը կարող է քաղաքացիական պատերազմի նախաբան դառնալ:

Նախագահի խոսքով, ԱՄՆ-ն եւ Իրանը լուրջ տարաձայնություններ ունեն մի շարք հարցերի շուրջ, ներառյալ՝

Միջինայի, քանի որ Իրանը «հապճեպ եւ կոշտ զջակցություն է ցուցաբերել երկրներից մեկին»:  
Բարաք Օբաման ընդգծել է, որ տարածաշրջանում իրադրության գարգացման Ռեհրանի տեսակետը հիմնվում է «բացառապես ներքին կրոնական ուղղությունների վրա (Իրաքի)», եւ իրանցիները կարող են հայտնվել մի իրավիճակում, երբ ստիպված կլինեն պատերազմել միանգամից մի քանի ճակատով՝ ի վնաս իրանցի ժողովրդի տնտեսական դրության:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

**Մտեր**

**Մեր Անցած Ճամփան**

**Թ. Ղարախանյան Սիրակցի**

Գյուղի պահակը (*ղաշտվանը*) բարձրաձայն հայտարարեց որ սար գնացողները իրենց պիտույքները վերցնելով սազ ու դեղձու հետեվից հանդարտ քայլեն դեպի աղբյուր: Եւ այսպես գյուղը թողինք ծերուկներին, տղամարդիք «Դուռնա Բազի» խաղալով, տիկնայք պար ու քի-լի-լի կանչելով քայլեցինք դեպի գյուղի հյուսիս բլուրների գլխին գտնվող տերտերի դալա աղբյուրը: այնտեղ վաղուց գյուղի խանութպանը դազաններով լի փլավի պատրաստություն էր տեսնում: Խրախճանքի բանակը հասավ բլուրի փեշին, որտեղ երկու չինարի ծառ հսկում էին Տերտերի դալայի չորս պատի փլված վերջին քարփիչները եւ գուլալ ջրի աղբյուրը: Հայրենադարձ նախկին հայ գյուղացին աղբյուրի շուրջի հողամասը հարթացրել եւ հարմարացրել էր ավանդական տոների համար, որտեղ շրջապարե էին պարելու եւ երազային հայրենական երգեր էին երգելու... մտածելով այդ մասին թվում էր թե նույնիսկ աղբյուրի գլզլան ջրի կըչկըչոցը հայեցի էր հնչում եւ հայ գյուղացու հայրենասեր բոցկլտող շունչի մոխրացած հոտն էինք ածնում...սրտի մեկ կողմից նոր պարսիկ գյուղացու հետ ուրախանում եւ սրտի մյուս կողմից նախկին հայ գյուղացու հիշատակից տխրում: Հրճվանքների աղմուկը դղրդում էր շրջակայքի լեռնաշխարհը:

Ձախից ու աջից գուցե տասնյակ անգամ շնորհակալության խոսքեր էին ասում ինձ, այսքան անսպասելի ուրախության առիթներ ստեղծելու համար: Խեղճ գյուղացիք իրենց կյանքի ընթացքում այդքան խմբային ուրախություն չէին տեսել եւ իրենց ասության միայն հարսանիքների ժամանակ էր որ սազ ու դեղձու ձայն են լսել եւ ուրախացել, բայց ոչ թե գյուղովի իրար շուրջ հավաքվեն եւ տոնեն զարնան առաջին օրը, որը ամեն անհատի տոնն է : Հրճվանքը շարունակվեց մինչեւ երեկնապահ եւ ուրախությունը բլուրներից իջեց եւ վերադարձավ գյուղ եւ այս պատմական օրը մնաց ապագա գրույցների նյութ: Օրվա վերջում ծրագրեցի որ նորեկ պարսիկ գյուղացուն մի պարսկական ժողովուրդական խմբային երգ սովորեցնեմ. օրինակ մեր ջանգուլում կամ համբարձում երգլայի նման երգեր, որ հայրենադարձ հայ գյուղացին հենց նույն այս աղբյուրի շուրջ է երգել: Ինքս ինձ մտածեցի որ այդ ինչից է, որ այս նորեկ պարսիկ գյուղացին ապրելով հենց նույն հայ մարդու տանը, հաց թխել նույն հացի թոնիրով, ի՞նչպես է, որ նույն հայի նման երգ չունի... մտածեցի եւ էլի տխրեցի հայության անցյալի մասին...եւ կարծես գոհանակություն էի ստանում մտածելով որ հայ գյուղացին գնաց իր երազանքների հայրենիքը: Այդ օրվա ընթացքում մի քանի տեսարան նկարեցինք, այդ օրերին նկարելու ապարատը մի քառակուսի տուփ էր, որ փոքր ապակի լուսանցք ուներ եւ երկու ձեռքով բռնելով վար պիտ նայելի օբյեկտը տեսնվեր եւ կոճակը բթամատով սեղմվեր ցած եւ ֆիլմը փոքր գլանակի պես մտցվում էր տուփի մեջ... միայն քանչորս պատկեր կարելի էր նկարել եւ երբ հաշվիչ թիվը հասնում էր քսան չորսի, ապարատը պիտի մի մուօ տեղում բացել եւ ներսի ֆիլմի գլանը հանել նկարը տպելու համար: Այս նկարները Նոր Ջուղայում տպեցի եւ տեղադրեցի դպրոցի պատին: Այս նկարները այնքան հետաքրքրություն ա-

ռաջացրին որ կարծես թանգարանի մատյան, խումբ-խումբ տեսնելու էին գալիս, նայում, զարմանում, խնդում, ծիծաղում եւ չէին հավատում, կարծես հրաշք էին տեսել իրար ասելով որ «մի թե կարելի է, ո՞ւ պատկերը ես եմ»: Այսպիսով ուզեցի մի հիշատակ թողնել այս նախկինում տիրող հայ մարդու հոգեբանության հայրենիքի վառվող կարոտի մի պատկեր, որ այդ օրվա պատկերները հիշվի տարիներ իբրև հարգանքի հիշատակ մեր հայրենասեր ՀԱՅ Գյուղացու ավանդույթի եւ մշակույթի հզոր հոգեբանության, որ թափանցում է Հայ մարդու հոգու խորքը եւ օրինակ ծառայի, նորեկ պարսիկ գյուղացուն որ շարունակեն այդ ավանդույթը եւ գա մի օր, որ ա-խ քաշելով հիշեն եւ իրար պատմեն հայերից թողած այսքան գեղեցիկ ու քաղցր սովորույթները:

Գյուղը նոր շունչ էր զգում, մաքրված բակեր ու փողոցներ, դալի դուռ ու դալի հետեւ, մի մաքուր դպրոց իր նոր ու լայն ճերմակ ու կանաչ ճամբով, լայնատարած խաղալու բակ, մաքրազարդված հայկական հին եկեղեցին վերածված նոր Մզկիթի, գետնին ու երկինքն լցվել էր մարդկանց ու անասունների կանչերով...բայց ...չկար որեւէ հայի ձայն, չէր լսվում «Պողոս...Պետրոս...Սնդրանիկ...Մարյամ», ոչ որ չէր կանչում «արի...գնա...բա որտե՞ղ ես»: Հայ գյուղը լրիվ տեղաբանվել էր ներգաղթել էր Հայրենիք եւ այս տեսնելով մի կողմից ափսոսում եւ մյուս կողմից երագում, որ գաղթողները մի ավելի բարգավաճ ապրելակերպի հասած լինեն երագելի Հայրենիքում:

Աշակերտության տարավերջի քննություններն ավարտելով ուսուցչազինվորական պարտականությունս իր ավարտման էր հասնում եւ շուտ թե ուշ պիտի գյուղը թողնեի գյուղացուն եւ մի նոր աշխատանք գտնեի: Ղեկավարս առաջին եւ երկրորդ դասարանների տարավերջի քննության հարցերը գյուղ բերեց եւ պատվիրեց, որ քննության արդյունքները ինչ էլ որ լինի անտեսեմ եւ բոլոր աշակերտությանը նշեմ «*փոխված*»:

Վերջապես ծնողների ուրախության օրը հասավ: Այդ օրվա համար նախորդ գուղի խանութպանից գնել էի 30 թեյի բաժակ եւ պնակ գյուղի մզկիթին նվեր, բայց որոշեցի իբրեւ բարի սկիզբ եւ հաջողության հոգաբանություն, բաժակ պնակները ՂՂՄՍՍ սուրբ գրքի շնչով օրհնվի գյուղի ծերուկ պապի ընթերցումով, երիտասարդ տղաանարդ ծնողներից խնդրեցի, գյուղի պահակին օգնեն ծառայություն մատուցի եւ գյուղի պահակին դրամ տալով ապապրեցի գյուղի խանութից անուշեղեն եւ թեյ ու շաքարի գնումներ անի, ծնողներին կանչեցի եւ դպրոցի բակում թեյի եւ անուշեղեններ նվիրելու պատրաստություն դասավորեցի. եւ իմ նշանով, թեյ ու անուշեղեն մատուցի ծնողներին եւ աշակերտներին: Փոքրիկ կտրոնների վրա աշակերտների անուն-ազգանունը գրել էի եւ մեկիկ-մեկիկ անունները կանչելով իմ մոտ, յուրաքանչյուր կտրոնը հանձնելով կողքիս կանգնած գյուղապիտին խնդրեցի ինքը իր գյուղի տղա-աղջիկ գավակներին մոտիկից տեսնի, գովասանքի խոսք ասի, եւ խնդրի ամեն աշակերտի համար ծափահարեն:

Նախորդ գյուղապետից խնդրել էի իր լեզվով հայտարարի որ ծնողները հերթաբար, իրենց գավակի հետ գնան եւ ստանան իրենց անուշեղեն եւ թեյն ու շաքարը: Փակման արարողությունը երկար շարունակվեց եւ ամենայն հաջողությամբ եւ ավարտվեց Ուսման Ձորքի ուսուցիչ եւ զինվորական Ղարախանյանի զինծառայության արդյունավետ պարտականությունը: Արդեն շատերը ուրախանալու պահին իրենց տխրությունն էին հայտնում զինվոր-ուսուցիչ Ղարախանյանին կորցնելու բայց նաեւ ասացին «գոնե մի կողմից ուրախ էին որ առիթ ունեցան մոտիկից տեսնեն եւ շփվեն, ճշմարիտ եւ սրտցավ կառավարական պաշտոնյալի հետ»: Մի երկու փոքրիկներ էլ կմկմալով ասացին «սարքար...աղա մողիր...մո նիխամ թո բերի – *պարսկ...սիրուներս չի ուզի դու գյուղից գնաս*»: Երկու օր անց, հրաժեշտի պահը հասավ...

بر اساس این توافق، صدور گاز و فرآورده های نفتی روسیه برای تامین نیاز داخلی ارمنستان مشمول معافیت گمرکی خواهد بود. صدور الماس طبیعی با کاربرد صنعتی به ارمنستان نیز بر اساس شروط اعلام شده از سوی موسسات استخراج کننده الماس در روسیه برنامه ریزی و اجرا خواهد شد. بر پایه این گزارش، روسیه ورود مجدد کالاهای صادراتی با معافیت گمرکی به این کشور را ممنوع اعلام کرده است. این اقدامات در راستای تقویت اتحادیه اقتصادی اوراسیا ارزیابی می شود. ولادیمیر پوتین، رئیس جمهوری روسیه، 'نور سلطان نظربایف' رئیس جمهوری قزاقستان و 'آلکساندر لوکاشنکو' رئیس جمهوری بلاروس ماه می - اردیبهشت - گذشته، قرارداد 'اتحادیه اقتصادی اوراسیا' را در شهر آستانه امضا کردند و انتظار می رود ارمنستان نیز در آینده نزدیک به عضویت این اتحادیه درآید.

### عضوگیری گروه شبه داعشی در ترکیه



وب سایتهای خبری ترکیه از عضو گیری انجمن «حسادر» در محله چاغاتای استانبول خبر دادند.

وب سایتهای خبری ترکیه از عضو گیری انجمن «حسادر» در محله چاغاتای استانبول خبر دادند. ترکیه آنلاین به نقل از یکی از رسانه های مخالف اردوغان نوشت: انجمن موسوم به «حسادر» با پرچم گروه تروریستی داعش در حال عضو گیری از مردم استانبول است. وولکان ساغلام (رئیس این گروه) در جمع برخی از خبرنگاران اظهار داشت انجمن حسادر یکسال قبل از داعش تاسیس شده و قدیمی تر از آنست. وی درباره اهداف تشکیل انجمن حسادر صرفا به این مسئله اشاره کرد که ما با هر ظلمی مخالفیم و در کنار مظلومان با ظالمان میجنگیم. وولکان ساغلام درباره شباهت آرم انجمن حسادر با داعش گفت: این آرم متعلق به داعش نیست بلکه تصویر مهر حضرت محمد است که از گذشته های مورد توجه مردم بوده است. انجمن ما قدیمی تر از داعش است. گفتنی است در برخی از محله های استانبول پلاکارد و اعلامیه های به منظور عضو گیری نصب شده است و در آن از جوانان خواسته شده است تا برای مبارزه علیه ظلم به این انجمن بپیوندند.

### رئیس جمهوری قره باغ معاون رئیس پارلمان اروپا را به حضور پذیرفته است



" به گزارش آرم رادیو-باگو ساهاکیان " رئیس جمهوری قره باغ " یاتسک پروتاسویچ " معاون رئیس پارلمان اروپا را به حضور پذیرفته است. طی این دیدار مسائل مربوط به مناسبات قره باغ - اروپا، روند حل بحران قره باغ و تحولات منطقه ای مورد بحث و بررسی قرار گرفته اند. این مطلب را سرویس مطبوعاتی ریاست جمهوری قره باغ اعلام کرده اند.

" باگو ساهاکیان " رئیس جمهوری قره باغ تاکید کرده است که دولت استیانتاکرت برقراری و تقویت روابط با پارلمان اروپا و دیگر سازمان های اروپا را مهم ارزیابی می کند.

### ارمنستان از پرداخت عوارض واردات گاز، نفت و الماس از روسیه معاف شد

باکو- ایرنا -ارمنستان از این پس گاز، فرآورده های نفتی مورد نیاز و الماس طبیعی با کاربرد صنعتی را بدون پرداخت تعرفه گمرکی از روسیه وارد خواهد کرد.



به گزارش ایرنا، پایگاه خبری 'آینس پرس' جمهوری آذربایجان روز دوشنبه اعلام کرد: 'ولادیمیر پوتین' رئیس جمهوری روسیه توافقنامه همکاری در زمینه انتقال گاز طبیعی، فرآورده های نفتی و الماس استفاده نشده با کاربرد صنعتی به ارمنستان را که در دوم دسامبر سال ۲۰۱۳ در ایروان منعقد شده بود، امضا کرده است.


## اعتراف نیروهای تند رو در مورد شهر کسب



مخالفان سوری: قطر و ترکیه به ما خیانت کردند ابو آدم، یکی از رهبران میدانی گردان‌های سوریه می‌گوید: «ما مجبور به عقب‌نشینی از کسب شدیم. عده‌ای شهر کسب را فروختند. گردان‌های وابسته به قطر به سرعت و به شکل ناگهانی و به دلایل نامعلوم اقدام به عقب‌نشینی از این شهر کردند.»

مخالفان سوری: قطر و ترکیه به ما خیانت کردند ابو آدم، یکی از رهبران میدانی گردان‌های سوریه می‌گوید: «ما مجبور به عقب‌نشینی از کسب شدیم. عده‌ای شهر کسب را فروختند. گردان‌های وابسته به قطر به سرعت و به شکل ناگهانی و به دلایل نامعلوم اقدام به عقب‌نشینی از این شهر کردند.» به گزارش شفقنا(پایگاه بین‌المللی همکاری‌های خبری شیعه)، به نقل از دیپلماسی ایرانی، بعد از درگیری‌های شدیدی که در مدینه استراتژیک "کسب" در مرز سوریه و ترکیه روی داد و در آخر ارتش سوریه موفق شد آن را از دست مخالفان اسد خارج کند و کنترل آن را به دست بگیرد، شبهات نسبت به چگونگی خروج این شهر از دست مخالفان اسد بالا رفته است. مخالفان حکومت سوریه ترکیه و قطر به عنوان دو کشور مهم حامی مخالفان بشار اسد را متهم می‌کنند که به آنها خیانت کرده و باعث شدند تا این شهر به دست ارتش سوریه بیفتد. به گزارش روزنامه العرب، چاپ لندن، این شهر که عموم ساکنان آن ارمنی هستند چند هفته پیش در پی حمله مخالفان اسد به آن از کنترل ارتش سوریه خارج شده بود اما اکنون اطلاعاتی وجود دارد که نشان می‌دهد قطر و ترکیه در اقدامی هماهنگ مخالفان را وادار کردند تا از این شهر عقب‌نشینی کرده و آن را تسلیم حکومت سوریه کنند. نیروهای مسلح "گردان‌های سوریه"، وابسته به مخالفان مسلح بشار اسد که در اطراف شهر ساحلی "کسب" مستقر شده بودند در این باره می‌گویند که قطر شهر را فروخت و از مجموعه‌های مسلح تحت نفوذ خود خواست که آن را تخلیه کرده و از آن عقب‌نشینی کنند تا به این ترتیب دیگر گردان‌های مسلح مستقر در این شهر نیز اقدام مشابهی انجام دهند. آنها همچنین می‌گویند که دولت قطر بدون اطلاع قبلی و در اقدامی ناگهانی از دادن سلاح به آنها برای مبارزه با ارتش سوریه خودداری کرد و این مساله سبب شد تا نیروهای ارتش وفادار به بشار اسد بدون هر گونه مقاومتی کنترل شهر را به دست بگیرند. ابو آدم، یکی از رهبران میدانی گردان‌های سوریه در گفت‌وگو با روزنامه العرب می‌گوید: «ما مجبور به عقب‌نشینی از کسب شدیم. عده‌ای شهر کسب را فروختند و گردان‌های وابسته به قطر به سرعت و به شکل ناگهانی و به دلایل نامعلوم اقدام به عقب‌نشینی از این شهر کردند و تمامی مناطقی که تحت کنترلشان بودند را رها کردند، مساله‌ای

که باعث شد تا دیگر گردان‌های مسلح نیز به دلیل ضعف امکانات نظامی و تلفات بالا در میان نیروهایشان و همچنین از بین رفتن توانایی‌های لجستیکی کنترل شهر را از دست بدهند و فوراً اقدام به عقب‌نشینی از این شهر کنند. بعد از آن دیگر گروه‌های مسلح نیز عقب‌نشینی کردند تا مجبور نشوند هزینه‌های شکست را به تنهایی بپردازند.» دستوراتی برای عقب‌نشینی صادر شد و گفته شد هر کس این دستورات را اجرا نکند به او کمک‌های لازم داده نخواهد شد، در نتیجه و در نبود امکانات کافی عقب‌نشینی صورت گرفت. همچنین دیگر جریان‌ها نیز تصمیم به عقب‌نشینی گرفتند. برخی از این گردان‌ها که مشخص است چه کسانی‌اند، وابسته به اخوان المسلمین و قطر و ترکیه هستند و تحت اوامر آنها مجبور به عقب‌نشینی شدند. وی در ادامه می‌افزاید: «روشن است که بازی‌ای در کار است، یا عملیات خرید و فروشی را قطر در منطقه آغاز کرده است. هیچ بعید نمی‌دانیم که هماهنگی‌ای میان ایران و ترکیه نیز در این زمینه وجود داشته است. و الا عقب‌نشینی به این شکل به سود مخالفان نیست. ما حتی در موقعیت ضعف هم نبودیم که بخواهیم عقب‌نشینی کنیم بلکه حتی خود را آماده می‌کردیم تا مناطق بیشتری را در مناطق ساحلی تصرف کنیم.» در همین رابطه ایاد ابو عرب، از رهبران جبهه التحریر برخی جریان‌ها و گردان‌های نظامی را متهم به عقب‌نشینی ناگهانی از کسب می‌کند و می‌گوید: «دستورهایی برای عقب‌نشینی صادر شد و گفته شد هر کس این دستورات را اجرا نکند به او کمک‌های لازم داده نخواهد شد، در نتیجه و در نبود امکانات کافی عقب‌نشینی صورت گرفت. همچنین دیگر جریان‌ها نیز تصمیم به عقب‌نشینی گرفتند. برخی از این گردان‌ها که مشخص است چه کسانی‌اند، وابسته به اخوان المسلمین و قطر و ترکیه هستند و تحت اوامر آنها مجبور به عقب‌نشینی شدند. می‌توانم بگویم خیانتی در کار بوده و مناطق تحت کنترل مخالفان را عده‌ای فروختند. امیدواریم که این استراتژی جدید این جریان‌ها نباشد و نخواهد شامل دیگر مناطق بشود.» افراد مسلح وابسته به گردان‌های موسوم به "جنود الشام"، "جنبش احرار الشام"، "جنبش شام الاسلام"، "جنبش انصار الشام"، "سپاه شام"، فرقه "ابناء القادسیه"، تجمع شامنا و شماری از گردان‌های اسلام‌گرای دیگر در مارس گذشته با یورش به شهر استراتژیک کسب کنترل این شهر را به دست گرفتند. اما هفته گذشته پس از چند روز درگیری سنگین با ارتش سوریه مجبور به عقب‌نشینی از آن شدند و کنترل شهر را به ارتش سوریه واگذار کردند. اکنون این گردان‌ها و جریان‌ها ترکیه و قطر را متهم می‌کنند که با توقف کمک‌های لجستیکی و تسلیحاتی به آنها دستور دادند که از این شهر عقب‌نشینی کنند. به گفته منابع رسمی بیشتر کسانی که عضو این گردان‌ها و جریان‌ها هستند غیر سوری هستند که برای مبارزه با حکومت بشار اسد به سوریه آمده‌اند. به گفته منابع رسمی تا کنون یک سوم ساکنان ارمنی سوریه که در حدود ۱۳۰ هزار نفر می‌شوند این کشور را ترک کرده‌اند. ده‌ها هزار نفر نیز به مناطق امن دیگر در داخل سوریه از جمله مناطق ساحلی و شهر قامشلی در شمال شرق سوریه پناه برده‌اند.



**تحولات جدید سوریه**



**ارمنیان کسب به خانه های خود باز می گردند**

ارمنیان کسب به خانه های خود باز می گردند. این مطلب را " نارك لوسینیان " کشیش کلیسای کاتولیک ارمنی ضمن مصاحبه با آژانس خبری " آرمن پرس " بیان کرده است. به گفته وی در حال حاضر مسائل متعدد از جمله انرژی برق ، آب رسانی ، اینترنت و تماس تلفنی باید حل شوند. جامعه ارمنیان کسب برای حل این مسائل از حکومت سوریه درخواست کرده و امیدوار است که بزودی این مسائل حل و فصل گردند. وی اعلام کرده است که در زمان اشغال شهر کسب کلیسا ها ، موسسات ، مراکز فرهنگی ارمنی تخریب و یا به آتش کشیده شده اند. یاد آوری می کنیم که ارتش سوریه شهر کسب در ریف شمالی استان لاذقیه را آزاد کرد و از تروریست های تکفیری پس گرفت و اکنون پرچم سوریه در این شهر برافراشته شده است . به گزارش آژانس خبری " سنا " سوریه ، نیروهای مسلح و ارتش سوریه با انتشار بیانیه ای از آزاد سازی شهر مرزی "کسب" در ریف شمالی لاذقیه خبر داد. در این بیانیه تاکید شده است که نیروهای ارتش سوریه بر این شهر تسلط کامل پیدا کرده و یگان های مهندسی ارتش سوریه در حال پاک سازی بمب ها و مین های کار گذاشته شده از سوی گروه های مسلح در این شهر هستند. همچنین این بیانیه اعلام کرده است که نیروهای ارتش سوریه پیشروی خود به سمت مناطق همجوار و اطراف کسب ادامه می دهند. قابل ذکر است که اکثر ساکنان شهر کسب ارمنی هستند و در مرز ترکیه واقع شده است. این شهر در ۲۱ مارس توسط گروه های وابسته به القاعده تصرف شده بود. سوریه هم ترکیه را مسئول تصرف آن اعلام کرده بود. سوریه گفته بود نیروهای القاعده از خاک ترکیه وارد کسب شده بودند در همین حال ارمنیان شهر واشنگتن ضمن تظاهرات اعتراض آمیز جلوی کاخ سفید از ارمنیان سوریه حمایت کرده اند ارمنیان شهر واشنگتن ضمن تظاهرات اعتراض آمیز جلوی کاخ سفید از ارمنیان سوریه حمایت کرده و از " باراک اوباما " رییس جمهوری آمریکا درخواست کرده اند تا دست به اقدامات مناسبی برای جلوگیری از بمباران محله ارمنی نشین شهر حلب و مطرح مسئله نابودی شهرهای شمالی سوریه که جامعه بزرگ ارمنی در آن شهرها زندگی می کنند بزند. " رازمیک لیباریان " نماینده کمیسیون مسئله ارمنی در آمریکا تاکید کرده است که شهروندان حلب و مخصوصا جامعه ارمنیان محله ارمنی نشین " نور گیوق " مورد حملات گروه های تروریستی که از سوی دولت ترکیه حمایت می شوند قرار می گیرد.

**Թամար Փանոսյան  
Հայերեն-պարսկերեն առածանի**

زبانزدهای ارمنی-فارسی  
تالیف تامار پانوسیان


**ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ**

- Էջը քառասուն անգամ Երուսաղեմ է գնացել, էլի էլ է մնացել:
- Էջն ի նչ գիտե, նուշն ինչ է:
- Էս շանն էս շարականն էլ շատ է:
- Էս քեզ խրատ, էլ չցանես կտավիատ:
- Ընկել է փողատերը, կանգնել է տղատերը:
- Ընկերովի մահը հարսանիք է:
- Թացն էլ չորի հետ վառվում է:
- Թե փող չունես ծոցիդ, ականջ չեն դնի ծվոցիդ:
- Թռչուն կա միսն է ուտում, թռչուն կա միսն են ուտում:
- Թռչունը թեուվ է թռչում, մարդու համբավը՝ գործով:

**ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ**

- Մինչև Իրաքից ճար կբերեն, օձի կծածը կմահանա:
- Մինչև իսելոքը կամուրջը կգտներ, հիմարն զետըր անցավ:
- Մրջյունի տանը ցողից էլ կարող է ջրհեղեղ լինել:
- Մրջյունն էլ իր տան մեջ խան ու սուլթան է:
- Յուղը կատուն է կերել, իմ բերանից են հոտ քաշում:
- Նա որ հազար կույր աղջիկ ունենա, հազարին էլ մի օրում մարդի կտա:
- Նա հին դարմանն է քանուն տալիս:
- Նետած քարը ուր է թռչի, կաղի ոտքին կդիպչի:
- Նետը մարմինն է խոցում, լեզուն՝ սիրտը:
- Նոր կթի ջուրը սառը կլինի:

## کشتار با شقلعه در دسامبر ۱۹۱۴



این کشتار در هفته نخست دسامبر ۱۹۱۴ روی داد. احمد بیگ، فرمانده ۱۶۰ ژاندارم و شرف بیگ رئیس عشایر شیکار همراه ۱۵۰ سرباز لشکر حمیدیه پس از عقب نشینی روسها به باشقلعه یورش برده اند. آنان خانه های ارمنیان را چپاول کره و آتش می زنند، مردان را می کشند، و اجساد آنان را در خیابان رها می کنند و دختران زیبا را با خود می برند و زنان و کودکان بی پناه را بدون غذا و سرپناه رها می سازند. روستاهای همجوار نیز سرنوشتی همانند با شقلعه دارند. ارمنیان روستاهای پاز، آراک، پیس، آلایان، آلوز، سوران، رسولان و آواگ را در یک مکان جمع کرده آنها را به سوی دره برده آنها را به قتل می رسانند. بر اساس اطلاعات اخیر شمار ارمنیان در روستاهای فوق بالغ بر ۱۶۰۰ نفر بود (تعداد کمی نیز مسیحی نسطوری) ۱.

Barby Henry, Au pays de l'epouvante: L'Armenie marture. Pref. de M. Paul Deschanel. Paris 1917.

ماهنامه ارمنی - فارسی زبان

# لویس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر

ادیک باغداساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۹۴۸۸-۱۵۸۷۵

پست الکترونیکی: [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)

نشانی اینترنت : [www.louysonline.com](http://www.louysonline.com)

چاپ احسان - تهران خیابان انقلاب شماره ۱۱۴۸ کدپستی ۶۳۵۶۱-۱۳۱۵۷ تلفن ۶۶۴۹۵۷۶۱

۲۸ صفحه تکشماره ۵۰۰ تومان

اشتراک مجله: تکشماره ۵۰۰ تومان. ایران یک سال ۶۰۰۰ تومان خارج ۵۰ دلار شماره حساب ۱۴۰۶۸۶۴۹۲ بانک تجارت شعبه مجیدیه سه راه آرامنه

- ♦ مقالات و دیدگاه های مندرج در ماهنامه «لویس» لزوماً بیانگر موضع مدیر مسئول و هیئت سردبیری نیست.
- ♦ مقالات ، عکس ها و مطالب رسیده باز گردانده نمی شود.
- ♦ نشریه در حکم و اصلاح مقاله ها مجاز است.
- ♦ استفاده از مطالب «ماهنامه لویس» با ذکر ماخذ آزاد است.

## در گذرگاه تاریخ

مجموعه اسناد تاریخی نژادکشی ارمنیان در امپراتوری عثمانی - ایروان ۱۹۹۱

گردآوری و ویرایش : پرفسور آکادمیسین م.گ. نرسیسیان

ترجمه : ادیک باغداساریان (ا.گرمانیک)

## گزیده نامه جاثلیق (رهبر کل کلیسای ارمنی) گئورگ پنجم به

ورنسف داشکف

نیابت سلطنه روسیه در قفقاز

اچمیادزین

۸ نوامبر ۱۹۱۴

پس از آغاز جنگ در مرز قفقاز با حمله نیروی دریایی ترکیه در سواحل دریای سیاه، ارمنستان ترکیه صحنه اصلی جنگ شده است که پیامدهای دهشتناکی بدنال خواهد داشت.

انتظار می رود کشتار ارمنیان توسط حکومت ترکیه، ارتش ترک و بویژه گروه های مسلح غیر نظامی و جمعیت متعصب انجام شود، رویدادهای فجیعی که هیچگاه در تاریخ روی نداده اند.

ملت ارمنی اکنون همه توجه خود را روی ارمنیان ترکیه متمرکز کرده است.

اقدامات مشترک دولت تزاری و قدرت های اروپای برای بهبود وضعیت ارمنیان ترکیه هیچ نتیجه ای نداشته است.

اکنون که ارمنیان همراه ارتش پیروز تزاری بر علیه دشمن مشترک می جنگیدند. بسیار پسندیده خواهد بود اگر اعلامیه و نامه ای به نام تزار خطاب به ارمنیان ترکیه صادر شود و به ارمنیان شش ولایت ارمنی (وان، ارزروم، بیتلیس، سواز، دیاربکر، خاربرد) و کیلیکیه امیدواری داده شود که روسیه به آنان خودمختاری اعطاء خواهد کرد و ارمنیان را از یوغ سنگین ترکان نجات خواهد داد.

آرشیو دولتی ارمنستان، ۱، ۱، ۲۰۹ ص ۵۱-۳.

## گزارش مترجم سفارت روسیه در استامبول به وزارت خارجه

این کشور

تلگراف شماره ۱۶۴

۱۵ مارس ۱۹۱۵

وضع ارمنیان در ترکیه بطور چشمگیری رو به وخامت نهاده است. سربازان ارمنی ارتش ترکیه را خلع سلاح کرده اند. زد و خوردهایی در منطقه زیتون روی داد، تا سربازان فراری را دستگیر کنند. همه مردان منطقه در تل تبعید شده اند. تنها سه روستا از ۱۷ روستای ارزروم نجات یافته است، بقیه آنها مورد چپاول و انهدام قرار گرفته است. در سراسر کشور ارمنیان دستگیر می شوند. در استامبول ۱۴ ارمنی عضو حزب هنجاک دستگیر و به دادگاه نظامی تحویل شده اند. بطریقیه (مرکز رهبری کلیسای ارمنی ترکیه) استامبول از وضعیت موجود شدیداً نگران و هراسناک است.

سرافیموف

# Լույս են տեսել

## Էդիկ Բաղդասարյանի նոր գրքերը

ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ը 10 ՀԱՏՈՐՈՎ  
ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ը 7 հատորով

Հայ-պարսիկ դարավոր բարեկամությունը – (Պարսկերեն) و ارمنیان و ایرانیان دوستی دیرینه

ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ-ը`

(պարսկերեն) 2 ՀԱՏՈՐՈՎ جلد اول و دوم – تاریخ ارمنیان ایران

Աղվանք, Աղբբեջան, Ոճրագործություն եւ Ծավալապաշտություն

(Պարսկերեն) آذربایجان، جنایت و توسعه طلبی

Հայ Գրականության Պատմություն 3 հատորով (Պարսկերեն) تاریخ ادبیات ارمنی در ۳ جلد

Հայկական հարցը, 2 հատորով (Հայերեն)

Շահնամեն եւ հայկական աղբյուրները (Պարսկերեն) شاهنامه و منابع ارمنی

Հայկական հարցը-հնագույն շրջանից մինչև մեր օրերը-երկու հատորով مسئله ارمنی از دیرباز تا اکنون

Կոմիտասը եւ Հայ դասական երաժշտության ձևավորումը (Պարսկերեն)

کومیتاس و شکل گیری موسیقی کلاسیک ارمنی

Գիքորը, անգլերեն, 2014, تورونتو, اثر هوانس تومانیان برگردان انگلیسی, تورونتو, ۲۰۱۴

Հոդվածների ժողովածու, Հատեր Ա,Բ- Պարսկերեն

گزیده مقاله های فارسی ادبیک باغداساریان, جلد ۱ و ۲, تورونتو, ۲۰۱۴

Հոդվածների ժողովածու, Հատեր Գ, Հայերեն

گزیده مقاله های ارمنی ادبیک باغداساریان, جلد سوم, تورونتو, ۲۰۱۴

Հայ գրականության ընտրանի (Անգլերեն եւ պարսկերեն) Տորոնտո, 2014.

گزیده نثر و نظم ادبیات ارمنی, برگردان فارسی و انگلیسی - ادبیک باغداساریان, تورونتو ۲۰۱۴

Ակնարկ Պարսկերենի Ուղղագրության, (Պարսկերեն) Տորոնտո, 2014.


نگاهی بر شیوه نگارش فارسی - ادبیک باغداساریان, تورونتو ۲۰۱۴

Թարգմանության մասին (Պարսկերեն), Տոտոնտո, 2014

نگاهی بر فن ترجمه, فارسی - ادبیک باغداساریان, تورونتو ۲۰۱۴

Հայոց ցեղասպանության Պատմություն, (Պարսկերեն), Տորոնտո, 2014

تاریخ نژادکشی ارمنیان, فارسی - ادبیک باغداساریان, تورونتو ۲۰۱۴



Պատվիրելու համար դիմել [edbagh@yahoo.com](mailto:edbagh@yahoo.com) կամ 1-818-627-8643